Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY

ԻՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ“ ՕՐԳԱՆ

1907

№ 5 (183) XVII ՏԱՐԻ ՄԱՅԻՍ 1907

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BUREAU
LIBRARY

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Համաձայն ընդհանուր ժողովի կարգադրութեան՝ ժողովի որոշումները բաժանուած են երեք կարգի՝

1) Մի մասը ընդհանրութեան համար, որը և հրատարակում ենք „Դրօշակի" ներկայ, յատուկ համարում։

2) Միւս մասը Դաշնակցական Մարմինների համար, որը և շատ շուտով կ'ուղարկուի կեդրոնական կոմիտէներին, տպագրուած առանձին տետրակով։

3) Երրորդ մասը յատուկ Մարմինների համար, որոնց և կը տեղեկագրուին նրանց վերաբերեալ գաղտնի վճիռները, կազմակերպական ճանապարհով։

Ընդհանուր ժողովի վերաքննած, լրացրած և վաւերացրած „ԿԱՆՈՆԱԳԻՐԸ" արդէն տպագրուեց և ուղարկուեց բոլոր Մարմիններին, առաջիկայում դրանով ղեկավարուելու համար։

„ԾՐԱԳԻՐԸ" տպագրութեան կը յանձնուի մօտ ապագայում։

„ԴՐՕՇԱԿ"

1907, Մայիս.
ԺԸՆԵՎ

ՉՈՐՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մոայլ, յոռետես մտքեր ներշնչող պարագաների տակ գումարուեց Դաշնակցութեան կուսակցաժողովը։— Հազիւ անցած արիւնոտ կռւի ճամբան, ռազմադաշտից նոր դարձած զօրագնդի հոգսերը ճակատին, յաղթական՝ բայց տրտում—յաղթողը իր անգիտակից հարևանն էր—կանգնած անորոշ ապագայի հանդէպ, կուսակցութեան գերագոյն ժողովը զգում էր իրեն նոր և խոշոր պատասխանատուութեան առջև, բարդ և վտանգաւոր կռիւների հանդէպ.—կռիւ արտաքին թշնամիների դէմ, որոնց յաղթահարելը իր տենչն էր ու նպատակը, կռիւ ներքին պառակտող տարրերի դէմ, որոնց սանձելը իր վիշտն էր և ոյժերի վատնումը...

Այդ մի կողմից։ Իսկ միւս կողմից՝ մի տարտամ Դումա, „թերխաշ“ ծնունդը յեղափոխական հսկայական երկունքի, քաղաքացիական ներքին ընդհարումներ, թշնամութիւն երէկեան մարտակից բանակների միջև, բռնապետութեան նոր գրոհ, անորոշութիւն վաղուան համար. իսկ սահմանի միւս կողմը՝ սովալլուկ հատուածներ արիւնաքամ ժողովրդի, դատարկուող գիւղեր, յեղափոխական մարտիկների՝ հալածանք և բանտարկութիւն, և կեդրոնում՝ նոյն ՈՃրագործը, դեռ կենդանի, դեռ յղացող մեծագոյն աղէտների, որոնց սոսկաբեր դառնութիւնը ճաշակեցինք, բայց վախճանը չը տեսանք։

Ընդհանուր ժողովի բացումն ու կազմն իսկ կրում էր աղէտաւոր վիճակի դրոշմը—շատ ընկերներ, որոնք անցեալ Ընդհանուր ժողովից ճամբայ ելան, յեղափոխականի ցուպը ձեռքին, նուիրուելու սիրած ժողովրդին և սիրած գաղափարին, այլևս յետ չ'եկան։ Զոհուած են նրանք... Միւսները թէև կենդանի, բայց կապուած իրենց վայրին ու գործին, անկարող էին յեղափոխական ժամադրավայրին գալու։ Տխրաշունչ լուրերն ու նամակները, օրը օրին, նոր բօթեր էին բերում և շտապեցնում գործող-ընկերների դարձն և մեկնումը, ժողովի փակումն և վերջաբանը։ Մարտական հաշուետուների ժողով չէր այն, այլ մօտալուտ կռւի համար սպառազինուողների մի գումարտակ, բաժանուած կռւի յատակագծով, տակտիքով, նոյնիսկ ծրագրով...

Ու հակառակ այդ չարագուշակ, ճնշող պարագաների, կազմակերպութիւնը դարձեալ մի անգամ ցոյց տուեց, որ „բախտաւոր աստղի տակ է ծնուել“, գիտէ անաբատ պահել 17-ամեայ Դրօշակը, և գաղափարի ոյժով յաղթահարել այն բոլոր կրքերը, որոնք չեն ստեղծագործում, այլ միայն աւերում են ու պառակտում...

Ժողովի պարապմունքների արդիւնքն և հիմնական որոշումները՝ դրա խրախուսիչ ապացոյցներն են։

1. Անչատման ծրագիրը, որ մի քանի ժամանակից ի վեր դարձել էր խլրտումների և նոյնիսկ կռիւների պատճառ, կուսակցաժողովը յետ մղեց մի ոգևորիչ ժեստով, համարեա միաձայն։ Նա որոշեց իր անցեալին և ոյժին վայել վճռականութեամբ՝ երկու դատերն էլ՝ Թիւրքահայ և Կովկասեան՝ առաջ մղել Դաշնակցութեան դրօշակի տակ, շաղկապուած և միացած։

2. Կովկասեան գործունէութեան նախագիծը, որ 1905-ի Խորհուրդից ի վեր, հանդիսանում է իբրև մի քաղաքական կուսակցական կազմակերպութեան շարքերում և այդ շարքերից դուրս, և իր պարունակած սկզբունքներով մեր շարքերը ոգևորելու փոխարէն, մի անըմբռնելի թիւրիմացութեամբ ամենատխուր ընդհարումների և պառակտումների պատրուակ եղաւ—ընդունուեց, վաւերացուեց, թէ ըստ իրաւասութեան, և թէ ըստ էութեան, և դարձաւ այն հիմնաքարերից մէկը, որի վրայ պէտք է յենուի Դաշնակցութեան սոցիալիստական գործունէութիւնը Անդրկովկասեան հայ ժողովրդի մէջ։ Այդ հարցի լուծումը, որ պահանջեց ոյժերի լարումն, երկար ժամանակ, մեծ աշխատանք և մտքերի լայն փոխանակութիւն—ներկայ ժողովի ամենագրական արդիւնքներից մէկն է, արժանի յատուկ յիշատակութեան։

3. Սոցիալիստական ծրագրի հիմնական սկզբունքների վաւերացումը, իբրև տրամաբանական շարունակութիւն նախորդ որոշման, պիտի համարուի Չորրորդ Ընդհանուր Ժողովի մտածողութեան և աշխատանքների պսակը։ Հիմնուած իր ընդհանուր ծրագրի վրայ, և ուշադիր քաղաքական-տնտեսական կեանքի պահանջներին, որոնք հրապարակ են եկել վերջին 15 տարուայ ընթացքում, կազմակերպութեան ղեկավար մարմինը վճռեց՝ յայտարարել Դաշնակցութիւնը իբրև հայ աշխատաւոր դասակարգի կուսակցութիւն, որ ձգտում է քաղաքականապէս և տնտեսապէս կազմակերպել նրան, պաշտպանել նրա տնտեսական-դասակարգային և քաղաքական-ազգային իրաւունքները, նպատակ ունենալով՝ միաս աշխատաւորների հետ միասին, ձեռք գցել կառավարութեան ղեկը, և այժմեան միապետական ու կապիտալիստական կարգերը փոխարինել լայն ռամկավարութեամբ և համայնական կարգերով։ Ժողովը ընդունեց և վաւերացրեց սոցիալիստական ծրագիրը և յեղափոխական տակտիքը։ Ահա այդ ծրագիրը, հիմնաւորուած Ընդհանուր Ժողովի մէջ, պիտի լոյս տեսնի մօտակայում և պիտի հանդիսանայ իբրև ուղեցոյց մեր գործունէութեան, պրոպագանդի և ձեռնարկների, իբրև յենարան կուսակցութեան աշխատանքների և մտածողութեան։—Իր այդ կարևոր որոշման վերջնական ամբողջացումն տալու համար, Ժողովը միաձայն որոշեց՝ յարել Միջազգային սոցիալիստական բանակին և յարաբերութեան մէջ մտնելով Բրիւքսէլի Սոցիալիստական Բիւրոյի հետ՝ ապահովել Դաշնակցութեան մաս-

նակցութիւնը թէ այդ Բիւրոյի և թէ Միջազգային սոցիալիստական կոնգրէսների մէջ։

4. Տակտիքը, որով պիտի ձգտենք մեր նպատակների իրագործման, գերազանցապէս յեղափոխական է։ Այդ կողմից Դաշնակցութիւնը, թէ Ռուսաստանի բազմաթիւ և թէ Թիւրքիայի փոքրաթիւ կազմակերպութիւնների շարքում գրաւում է բացառիկ դիրք։ Զը խորշելով այն ըէֆորմներից, որոնց ընթացիկ իրագործումը հասարակական-կուլտուրական այլ և այլ ասպարէզներում պահանջւում է աշխատաւոր մասսաների անյետաձգելի շահերի տեսակէտից, կուսակցութիւնը ինչպէս անցեալում, նոյնպէս և ապագայում մնալու է յեղափոխական, այս բառի ամենախիստ իմաստով։ Յեղափոխական տակտիքի արտայայտութիւնները— ընդհանուր ապստամբութիւն, զինուած դիմադրութիւն կառավարութեան ոյժերին, քաղաքական լայն տերրոր, ցուցական-յեղափոխական ձեռնարկներ, ժողովրդական զինուած ինքնապաշտպանութիւն, քաղաքական և տնտեսական գործադուլներ, գիւղացիական և բանւորական շարժումներ — այդ բոլորը մանրամասն մշակուած և շաղկապուած պիտի կազմեն գործելակերպի այն ամբողջական սիստեմը, որով կուսակցութիւնը պիտի իրականացնէ իր ծրագիրը կեանքի մէջ։

5. Համերաշխութեան սկզբունքը, լայնացրած և համերաշխ ձեռնարկների վերածուած, կազմելու է Դաշնակցութեան գործելակերպի էական և առանձնապէս շեշտուած կողմը։ Այն, ինչ ցայժմ տեսնենք էր, հիմա պիտի մարմնանայ և դառնայ իրականութիւն։ Եւ կազմակերպութեան Ընդհանուր Ժողովը յատկապէս շեշտեց այդ ուղղութեան քաղաքական խոշոր կարևորութիւնը Կովկասում և մանաւանդ Թիւրքիայում, ուր դրկից ազգերի և համայնքների փոխադարձ անտարբերութիւնը կազմում է տիրող ըէժիմի աջողութեան գերազանց հիմնաքարը։ Համերաշխութիւն հակակառավարական ցոյցերի ժամանակ, շաղկապումն ըմբոստացող ոյժերի՝ առանց կրօնի և ազգի խտրութեան, միացած, միջազգային հողի վրայ դրած պահանջներ, գործադուլներ բոլոր ազգերին պատկանող բանւորների, գիւղացիական միութիւններ տարբեր կրօնների պատկանող համայնքների միջև և ուրիշ շատ ձեռնարկներ—ահա համերաշխ գործակցութեան արտայայտութիւնները, որոնց համար կուսակցութիւնը չի խնայելու ոչ կենդանի ոյժեր, ոչ դրամ և ոչ պլոպագանդ։ Հալածուածներ բոլոր ազգերի, միացէք—ահա նշանաբանը։ Սեպարատիստական ոչ մի ձգտումն, ոչ մի դաւ համերաշխութեան դէմ—ահա Ընդհանուր Ժողովի անկեղծ և ընդգծուած հայեցակէտը։

Բարդ ծրագիր, խոշոր աշխատանք, անսովոր եռանդ և զոհաբերութիւն պահանջող ձեռնարկներ, և այդ՝ այնպիսի երկիրների մէջ, որ բռնապետութեան անսովոր ամբարտաւանութիւնը և շահերի հակոտնեայ դասաւորումը աւելի քան դժուարացնում է կազմակերպութեան անցնելիք ուղին։ Ահա թէ ինչու անհրաժեշտ են գաղափարի և կազմակերպութեան նուիրուած մարտիկներ, հերոսների խմբեր, անձնուէր դրօշակակիրներ, որոնք կարող լինեն մի կողմից սրտապնդել լքուող շարքերը, հաւատ ներշնչել թերահաւատ ամբոխին, և միւս կողմից՝ անդադրում և անհատնում ոյժով շարունակել սկսուած կռիւը, որ գուցէ նոյնքան երկար ապագայ ունի, որքան և երկար անցեալ։ Տատանողների, երկդիմի ոյժերի ասպարէզ չէ այդ։ Եւ ոչ էլ վայր՝ զբաղուելու ներքին պառակտումներով, փոխադարձ վարկաբեկման անօգուտ աշխատանքով, յեղափոխութեան անունը մրոտող ներքին կռիւներով։

Զտուած շարքեր, համոզուած զինուորներ, զոհաբերութեան պատրաստ մարտիկներ՝ ներշնչուած նոյն ծրագրով, սրտապնդուած միևնոյն տակտիքով—ահա կազմակերպութեան պահանջը։ Եւ ներշնչուած այդ գիտակցութեամբ, Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը՝ խստագոյն պատասխանատուութեան կանչելով այն բոլորին, զինուոր թէ կազմակերպող, անհատ թէ մարմին, որոնք վարկաբեկեցին կուսակցութիւնը իրենց զեղծումներով, բռնութեամբ և անարդ քայլերով, հրահանգում է բոլոր մարմիններին, աւելի քան երբ ևիցէ, խիստ լինել, վանել շարքերից այն բոլորին, որոնք իրենց „համոզմունքով ու հաւատով", իրենց բարոյական և յեղափոխական հակումներով չեն համապատասխանում այս դժուարին և բարդ գործի մեծ պահանջներին, որոնք փոխանակ բարձրացնելու հաւատը, պիտի թուլացնեն այդ, և պիտի սպառեն կուսակցութեան բարոյական դրամագլուխը, առանց մի բան տալու։ Զտման, մաքրագործման, բարձրացման կրկնակի պահանջ է այդ, որի մասին բարձրաձայն յայտարարում է 1907-ի Ընդհանուր Ժողովը շեշտակի կերպով, առանց որևէ վերապահութեան...

Անգործ, պառակտող մարմինները պիտի կազմալուծուին. վարկաբեկ ընկերները պիտի հեռանան. կազմակերպութեան անունը շահագործողները պէտք է խլստագոյն պատժի ենթարկուին—այդ է Ընդհանուր Ժողովի կամքն ու որոշումը, նրա բացարձակ հրամանը։

Դաշնակցական ընկերներ,

Յաղթանակօրէն յետ մղած անջատման, կազմալուծումի և ծրագրային հակամարտութեան ուրուականը, Ընդհանուր Ժողովը աւետում է ձեզ մռայլ, յուսաբեկող մթերի վախճանը և սկզբնաւորումը մի նոր շրջանի, որ դրոշմուած է մեր լաւ ոյժերի միութեամբ, ծրագրային համերաշխութեամբ և նոր ձեռնարկների որոշ յատակագծով։ Այդ նոր շրջանը պահանջում է նոր եռանդ, նոր թափ, ինչպէս և նոր տանջանք։

Զը նահանջենք տանջանքի առջև, որ մեր կռուի յատկանիշն է, երկարամեայ աղբիւրը մեր եռանդի և ջանքերի, ու սրտապնդուած գալիք օրերով, առաջ մղենք յեղափոխական կռիւը, յանուն սոցիալիստական մեծ յաղթանակի։

Դէպի բարձր, դէպի աշխատանք, դէպի կռիւ։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

„ԴՐՕՇԱԿԻՆ„

Դաշնակցութեան վերջի կոնգրէսն, մանրամասն վիճաբանութենէ յետոյ, որոշեր է ընդունիլ սոցիալիստական-յեղափոխական ծրագիրը։ Այս որոշումը բնաւ հակառակ չէ կուսակցութեան հին ծրագրին՝ որ կը յայտարարէր թէ քաղաքական անհրաժեշտ բարելաւութիւնը ձեռք բերելէ յետոյ՝ Դաշնակցութիւնը պիտի ձգտէր տնտեսական բարելաւութեան, որ նմանապէս անհրաժեշտ է։ Ռուսաստանի և Կովկասեան դէպքերը այնքա՜ն արագօրէն և այնքան ուժգնօրէն գահավիժեցին, որ խելացի դատողութիւնը և կեանքը կը պահանջէին հին ծրագրին այս լրացումը և սոցիալիզմին յարումը։

Թիւրքիոյ մէջ, այսօր, ինչպէս երէկ, քաղաքական ազատութիւն և տարրական իրաւունքներ ձեռք բերելու կռիւը՝ ամէն բանէ առաջ է։ Ատով միայն պիտի կատարուի հայերու ազատագրութիւնը, որոնք ձեռք պիտի բերեն, իրենց թափած այնքան արեան և կրած այնքան տառապանքներու գնով, բաւականաչափ ապահովութիւն իրենց անձին և ինչքին համար։ Դաշնակցութիւնը, ինչպէս անցեալին մէջ, պիտի աշխատակցի այս գործին, և անշուշտ Ռուսաստանի յեղափոխական կուսակցութիւններուն սկզբունքները չեն որ պիտի դանդաղեցնեն ֆէդայիներու սրտեռանդը։ 1870 և 1871-ին, սոցիալիստ մեծ յեղափոխականը, Բլանկի, որքան ատեն Թիւերի կառավարութիւնը զինքը բանտարկած չէր, օրինակով ցոյց տուաւ թէ սոցիալիզմը ինչեր կրնայ ընել՝ երբ հայրենիքը վտանգի մէջ է։ Անդրանիկ և իր զինակից ընկերները, Փոքր-ասիական հողի վրայ նոր ապացոյցը պիտի տան՝ սոցիալիզմի յեղափոխական կարողութեան։

Սակայն քանի մը տարիներէ իվեր, մանաւանդ ճապոնական պատերազմի աղէտներէն, ինչպէս նաև Ռուսաստանի մշտական յեղաշրջումի վիճակէն իվեր, որ կը մղէ Ռուսաստանը դէպի ցարիզմի կործանումը, կոյր պէտք էր ըլլալ չը հասկնալու համար, որ Թրքահայերու ապագան անլուծելիօրէն կապած է ռուսահայերու ապագային և որ ընդհանրապէս Եւրոպայի ազատութիւնը լայն չափով կախում ունի ռուս ժողովրդի և ռուս կայսրութեան կից ժողովուրդներու վերջնական յաղթութենէն՝ ցարիզմի դէմ։

Ա՛ս նոր կացութիւնը կը հարկադրէր Հայ Յեղ. Դաշնակցութեան նոր պարտականութիւններ և նոր գործելակերպ։ Առանց հրաժարելու իրենց ազգային պահանջումներէն թէ Թիւրքիոյ և թէ Կովկասի մէջ, անհրաժեշտ էր, որ ան կղզիացած և անտարբեր չը մնար այն ահաւոր պայքարին մէջ որ, երկար տարիներու համար թերևս, իրարու դէմ կը հաներ յեղափոխական և յետադիմական ոյժերը՝ ռուսական կայսրութեան բովանդակ տարածութեան վրայ։ Եթէ, օրինակի համար, ֆրանսացիները, ուշի ուշով կը հետևին այս մեծ ճակատամարտի անցուդարձերուն, այդ լոկ հետաքրքրութեան համար չէ. այլ որովհետև, շատ լաւ գիտեն, որ ցարիզմի տապալումի հետևանքը պիտի ըլլայ գերմանական դերիշխող ռեժիմի կործանումը, և այդպիսով պիտի ապահովի Արևմտեան ռամկավար ազգերուն ազատ զարգացումը, առանց նոր պատերազմի սպառնալիքներու և բռնի ուժի երկիւղը ունենալու։ Եւ առաւել՝ կովկասահայերը, որոնք կը մասնակցին ռուս յեղափոխութեան այս մեծ ողբերգութեան՝ իբր դերակատարներ և ոչ հանդիսականներ, պարտաւոր եղան որոշ դիրք բռնել. բաւական չէր, յեղափոխական միջոցներով՝ Թուրքերու ղոհ եղած գիւղերու մէջ կարգը վերահաստատել. անոնք լաւ նկատեցին թէ ինչ յարաբերութիւններ պէտք էր պահպանել և շփումներ ունենալ ռուսական կուսակցութիւններու հետ։ Իրերի ոյժով, անոնք ռուս յեղափոխական շարժումներուն յարեցան։

Ռուսաստանի մէջ նոյնը չէ, ինչ որ է Թիւրքիոյ մէջ։ Աշխատաւոր բանւորութեան ստեղծող արդիւնագործութիւնը, ուրկէ Նիկոլա I կը զարհուրէր, վերջի տասնեհինգ տարիներուն՝ Կովկասի մէջ շատ զարգացած է։ Թիֆլիզ, մանաւանդ Բաքու և Բաթում այժմ բանւորներու պատկառելի համախմբում մը կը ներկայացնեն։ Բանւորական այս խումբերը անտարակոյս անզգայ չեն քաղաքական պահանջումներուն, ինչպէս ցոյց տուին վերջին դէպքերու միջոցին։ Բայց իրենց անձնական փորձով հասկցան՝ թէ քաղաքական ազատագրութիւնը թերի է որքան ատեն որ կը շարունակէր տնտեսական ստրկութիւնը։ Անոնք ճանչցան գործադուլները, որոնք սոցիալիստական կռիւի էն ցաւալից ոյժն են, և գործադուլերու ժամանակ իրենց դիմաց տեսան „կօզակները“, պաշտպանող ոչ միայն ցարի ինքնակալութիւնը, այլև շահերը օտար կամ ռուս խոշոր դրամատէրերու—որոնք իրենց տեսակին մէջ, մի-մի փոքր „ցարեր“ են։ Բնական էր ուրեմն հայ բանւորներուն առաջադրել ոչ միայն քաղաքական ծրագիր մը, այլև սոցիալիստական։

Ինչ որ ճշմարիտ է արդիւնագործական բանւորութեան համար, ճշմարիտ է նաև հողագործ աշխատաւորութեան համար Կովկասի մէջ։ Թէպէտև սեփականութեան և կիսոնորդութեան ռեժիմը գաւառէ գաւառ կը տարբերի, սակայն միևնոյն երևոյթը ծանօթ է Կովկասի մէջ, ինչպէս ամբողջ ռուսական կայսրութեան մէջ. մինչդեռ անդին ընդարձակ արքունական հողեր կը մնան երեսի վրայ, գիւղացիները հողի պակասը ունին, մանաւանդ լաւ հողերու։ Հողային հարցը մեկն է այն հարցերէն, որ չէ կարելի յետաձգել և որուն լուծումը ձեռք կը բերուի միայն ծայրայեղ կորովի միջոցներով կամ ճիշդն ասած՝ յեղափոխական միջոցներով։ Ծանր պարտքերու տակ ճնշուած և անմշակ ձգուած լայնատարած հողերու կողքին՝ հողազուրկ գիւղացիին հարկաւոր է, ինչպէս բանւորին, բացի քաղաքական ծրագրէ մը, հողային ծրագիր մը ևս։ Հ. Յ. Դաշնակցութիւնը ինքն իրեն ծանր հարուած կը տար, եթէ արդիւնագործական և գիւղացիական աշխատաւորներու արդարացի պահանջներուն գոհացում չը տար, իբրև անոնց շահերու նուիրուած և գիտակցող կուսակցութիւն մը։

Ընդհանուր ժողովը դէն մղեց այս վտանգը։ Դաշնակցութիւնը ընդունելով սոցիալիստական ծրագիրը և յեղափոխական տակտիքը, անվթար կը պահէ Թիւրքիոյ և Ռուսաստանի մէջ իր ազգային պահանջումները։ Մինչ Թիւրքիոյ դժբաղդ ժողովուրդներուն համար՝ Դաշնակցութիւնը պէտք է նախ ապահովէ քաղաքական ազատութիւնները, կովկասահայերուն—որոնք մասամբ արդէն տիրացած են այդ ազատութիւններուն և թերևս շատանան տնտեսական շա-

հերու ձեռքերումով—ան կուսակցական համիդական բռնակալութեան տակ ճզմուած եղբայրներու ազատագրութեան ազնիւ իդէալը։

Այդ ծրագիրը, որը ընդունած է Դաշնակցութիւնը, պայծառօրէն ցոյց կուտայ կռուի կրկնակի արժէքը։ Ան դաշնակցած չէ դոգմատիկ կուսակցութեան մը, ինչպէս է սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը, այլ գործօն կուսակցութեան մը, ինչպէս սոցիալիստ-յեղափոխական կազմակերպութիւնը, որուն Ռուսաստանը կը պարտի այն ահարկու արդարադատները, որոնք իրենց կեանքի զոհաբերութեամբ՝ կատարեցին անհրաժեշտ վճռադրումները։—Այն կուսակցութիւնը որ Ռուսաստանին տուաւ Սազոնովներ և Գերշունիներ, միակ կուսակցութիւնն է որուն կրնար և պէտք էր յարիլ Դաշնակցութիւնը՝ որ իր շարքերուն մէջ ունի Սասունի և Օսմանեան բանկի հերոսները։

ՊԻԷՐ ՔԻՅԱՐ

Մայիս.
Պարիզ

ՉԸ ԿԱՅ ԱՆՁԱՏՈՒՄ

Ընկերներ,

Հայ Մարտական կազմակերպութիւնը դուրս է գալիս Ընդհանուր Ժողովի պայքարներից ուժեղացած, ներդաշնակուած և մէկ ու միաբողջական։

Մի անգամ ևս նա անցաւ փորձութեան բովից և շեշտեց հայ ժողովրդի թշնամիների հանդէպ՝ իր գոյութեան իրաւունքը, սրբագործուած 17 տարուայ պայքարներով։ Մի անգամ ևս նա ցոյց տուեց, որ այդ գոյութիւնը դարձել է այժմ նոյնքան բանաւոր ու նպատակայարմար, որքան անհրաժեշտ և հարկադրական։

Անխուսն բերկրանքի հետ այսօր բոլոր „ուղղափառ“ դաշնակցականների մէջ խօսում է և հպարտութեան օրինաւոր զգացումը, հիմնուած այն ջերմ ու մոլեռանդ նախանձախնդրութեան վրայ, որ նրանք տածում են երկար տարիներից ի վեր դէպի կուսակցութեան դրօշակը, դէպի նրա վարկը։

Մեզ համար, սակայն, անակնկալ չէր Ժողովի այդ ալող ելքը։ մենք գիտէինք, որ առերևոյթս հակամարտ ֆրակցիաները—որտե՞ղ չը կան նրանք, ո՞ր կազմակերպութեան մէջ—իրարու հանդիպելով, շատ թիւրիմացութիւններ պիտի ջրէին ընկերական բանակռիւների և բացատրութիւնների մէջ և պիտի հաշուէին ընդհանուր էական խնդիրների շուրջը։ մենք գիտէինք, այո՛, որ հակառակորդների չարախորհուրդ գուշակութիւնները „ֆիասկոի“, „պառակտումի“, „կազմալուծման“ մասին, բարեբախտաբար, չը պիտի իրագործուէին... Ի՜նչ. տասն և եօթ տարի հերոսութեան ու մարտիրոսութեան դափնիներ կրել ամենափշոտ, ամենասոսկալի մարտակրկէսում, երկու ֆրօնտի վրայ մղել անհաշիւ ու արիւնալի ճակատամարտներ այնքա՜ն զոհերով, այնքա՜ն պաշտելի նահատակներով և հռչակուել ամբողջ Կովկասում, ամբողջ աշխարհում, իբրև հայ կուլտուրական ազգայնութեան, հայ ժողովրդի շարժման ու պրօգրէսի միակ կուռնը և ապա յանկարծ, մի գեղեցիկ օր, մի քանի խղճուկ դաւերի շնորհիւ, մի քանի փսուռմոլ ինտրիգանների գձուռ ջանքերով վերջակէտ դնել մի այդպիսի գոյութեան, մարել ընդմիշտ և անվառունակ, անպատիւ կերպով հայ ժողովրդի դիւցազներգութեան հօրիզոնների՛ց։—Դա կը լինէր պատմական ու հոգեբանական անհեթեթութիւն, դա կը լինէր աբսուրդ։

Ոչ, մեզ համար անակնկալ չէ ժողովի վախճանը։ Անակնկալ էր բոլոր նրանց համար, որոնք տարուել էին մակերեսային զրոյցներով Դաշնակցութեան „ներքին տագնապի“ և քայքայման մասին, որոնք չէին չափել ամբողջ խորութեամբ այդ կուսակցութեան ժողովրդականութիւնը, ոչ էլ այն ոգին, ընկերականութեան, համերաշխութեան այն առողջ ոգին, որով համակուած է Դաշնակցական ղեկավարող գիտակից տարրը։

Անակնկալ է և այն բոլոր հայ-հասարակական տականքների համար, որոնք վերջին ժամանակներս իրենց անգիտակից խաղերով, „մերկացումներով“ ու հրապարակական ստորութիւններով թէև էին տալիս հայ ժողովրդի ոսոխներին—ցարի ու սուլթանի ագենտներին, կովկասեան խուժանապետներին, կրուշեվաններին—և նրանց հետ ուրախութեան ծափ էին զարկում Դաշնակցութեան մէջ տեղի ունեցող ամեն մի պառակտիչ երևոյթի առթիւ...

Վաղաժա՞մ էր։ Պառակտման և կազմալուծման հնարաւորութիւնը այժմ գուցէ աւելի քան երբևիցէ հեռու է մեզնից։ Ընդհանուր Ժողովը հաստատեց այդ իր նշանաւոր, այժմից պատմական, որոշումներով, նա որդեգրեց կովկասեան գործունէութեան ն ա խ ա գ ի ծ ը և դրանով շեշտեց, որ կարելի է գործել երկու նոյնիսկ տարբեր պետութիւնների սահմաններում, ունենալով մէկ ծրագիր ու աշխարհայեացք, մղելով մէկ տեղ կռիւ՝ յանուն մարդկային տարրական իրաւունքների, մի այլ տեղ կռիւ՝ յանուն ազգային ապահովութեան ու ժամանակ դասակարգային իրաւունքների, և ամեն տեղ կռիւ յանուն սոցիալիզմի, հաւասարութեան ու արդարութեան։

Հայ բազմատանջ ժողովուրդը կարօտ է միշտ հզօր ու գործօն մի կազմակերպութեան, որը թէ իր սև օրերում, երբ զուլումը պաշարումէ չորս կողմերից և թէ սովորական, նորմալ ժամանակ, տնտեսական խաղաղ պայքարի օրերում՝ կարողանայ ազգուօրէն պաշտպան կանգնել իր գոյութեան և առաջադիմութեան։ Եւ այդ կատէգորիկ հրամայականի հանդէպ չքանում են „օսմանեան“ և „ռուսական“ ածականները հայ անուան առջև, երկու դատերը՝ երկուսն էլ վեհ, սուրբ ու նուիրական՝ համադրւում են Դաշնակցութեան մէջ, երկու ժողովուրդները հայ համայնքի երկու պատմական հատուածները, յանձին իրենց յեղափոխական ներկայացուցիչների, միանում են և հանդիսաւոր մի որոշումով ջ ն ջ ո ւ մ ս ա հ մ ա ն ն ե ր ը...

Այո, ջնջուած են սահմանները տաճկահայ և ռուսահայ ժողովրդի միջև,—այդպէս էր բացականչում մեր Քրիստափորը դեռ չորս տարի սրանից առաջ, եկեղեցական գոյքերի կռիւը պայթելու միջոցին։ Ջնջուած էին սահմանները մինչև օրս de facto, իրականապէս, իսկ այսուհետև նրանք ջնջուած են և de jure, իրաւապէս։ Ասպարէզը բաց է—դժուարին, զոհառատ կռիւ ասպարէզը։ Թող բոլոր նրանք, որոնք տոգորուած են Դաշնակցութեան լաւագոյն աւանդութիւններով, որոնց մէջ անկեղծ ու համեստ գործունէութեան տենչը աւելի ուժեղ է, քան գձուռ ու ճռռոմ հատուածմոլութեան ամբարիշտ ոգին—համախմբուին նոր, ընդարձակուած Դրօշակի շուրջը և կրկնապատկուած եռանդով շարունակեն ազատութեան կռիւը։

Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

ԱՆՋԱՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ

(Երկու բանաձեւ)

Ընդհանուր ժողովը լսելով Դաշնակցութիւնը երկու հատուածների—կովկասեան և Թրքահայկական—բաժանելու մասին եղած զեկուցումները և այդ առթիւ ծագած վիճաբանութիւնները, որոշեց.

1) Ցետ մղել անջատման առաջարկը.

2) Երկու գործունէութիւնն էլ վարել Հ. Յ. Դաշնակցութեան դրօշակի և ղեկավարութեան ներքոյ։

(Պատճառաբանութեամբ)

Ընդհ. ժողովը լսելով Դաշնակցութիւնը երկու հատուածների—կովկասեան և Թրքահայկական—բաժանելու մասին եղած զեկուցումները, ինչպէս նաև այդ առիթով ծագած վիճաբանութիւնները և նկատի ունենալով,

1) Որ հայ աշխատաւոր ժողովրդի այդ երկու հատուածների քաղաքական-տնտեսական կռիւը հիմնուած է միևնոյն Ծրագրի վրայ, վաւերացած 1892-ին և լրացուած Գ. Ընդհ. ժողովի որոշումներով և 1905-ի „Նախագծով“,

2) Որ Թրքահայկական և կովկասեան գործունէութիւնները, ինչպէս այդ շեշտուեց ժողովի ընթացքում, ոչ միայն չեն վնասում այլ և նպաստում են երկու երկիրների աշխատաւոր ժողովրդի շահերի յաղթանակին,

3) Որ Թրքահայ ժողովրդի շարժումը—որին կազմակերպութիւնը ծառայում է 17 տարիներից ի վեր, այժմ մանաւանդ, երբ Թրքական ըէժիմից դժգոհ տարրերը սկսել են շարժուել—պահանջում է հաւասարաչափ գործունէութեան համար մեր յեղափոխական ուժերի կրկնակի լարումն ու շաղկապումը,

Որոշեց.

1) Ցետ մղել անջատման առաջարկը, իբրև մի տեսակէտ, որ չէ հիմնուած մեր աշխարհայեացքի և գործունէութեան վրայ և չէ բղխում կազմակերպութեան շրջանների որոշումներից (21 մարմիններից 20-ը հակառակ անջատման, միայն մէկն է կողմնակից)։

2) Երկու գործունէութիւնն էլ վարել Հ. Յ. Դ. դրօշակի և ղեկավարութեան ներքոյ։

3) Հաւատարիմ մնալով կուսակցութեան Ծրագրին, վայրերի գործունէութիւնը առաջ տանել տակտիքի ուրոյն եղանակով, յարմարցրած տեղական հանգամանքներին և պայմաններին։

ՏԱԿՏԻՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Ընդհանուր ժողովը լսելով զեկուցումները ապստամբական ձեռնարկների մասին և մանրամասն քննութեան ենթարկելով շօշափած հարցը՝ կայացրեց հետևեալ որոշումները.

1) . . . . . .

2) . . . . . .

3) . . . . . .

4) Գործունէութեան գլխաւոր վայրերում . . . . . առաջացնել կազմակերպութիւններ, սրանց շուրջը լայն ժողովրդական խաւեր համախմբելով, և յատուկ պատասխանատու մարմին՝ այդ ամբողջ վայրի համար, որ իր շրջանի բոլոր գործերի կարգադրողն ու պատասխանատուն է։

5) Ցանձնարարել . . . մարմնին երկրի լայն ռազմական ուսումնասիրութիւն անել և պատրաստել ռազմական ծրագիրներ, այս կամ այն պատահականութեան համար։

6) Անակնկալ պատահարների դէպքում յիշեալ վայրերում պատասխանատու մարմինը կարող է դիմել ակտիվ ձեռնարկների, նախօրօք ստանալով Դաշնակցութեան Խորհուրդի համաձայնութիւնը։

ՏԵՌՕՐ

Ընդհանուր ժողովը լսելով տեռօրի մասին եղած զեկուցումը և այդ առիթով տեղի ունեցած մանրամասը և բազմակողմանի վիճաբանութիւնը, որոշեց.

1) Կազմակերպել քաղաքական սիստեմատիկ տերրոր . . . . ընդունելով ներկայ պայմաններում նրա ունենալիք խոշոր հետևանքները։

2) . . . . . .

3) Ընդունել գործունէութեան վայր . . . . .

4) Հաստատել „Տեռօրական գործօն կոմիտէ“ . .

5) Ընտրել մի նախապատրաստական կոմիտէ, բաղկացած երեք ընկերներից, այդ գործի բոլոր նախապատրաստութիւններն անելու և գործօն կոմիտէն ստեղծելու համար։

6) . . . . . .

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Թիւրքիոյ հայաբնակ վայրերուն մէջ

Ժողովը լսելով ինքնապաշտպանութեան գործի կազմակերպման վերաբերեալ զեկուցումը և նկատի առնելով ինքնապաշտպանութեան մասնախմբի եզրակացութիւնները, որոշեց՝

Լուրջ հիմքերու վրայ դնել ինքնապաշտպանութեան գործի կազմակերպումը, առաջնորդ ունենալով հետևեալ չորս կէտերը։

1) Ինքնապաշտպանութեան խմբերը կը զինուին տեղացիների նիւթական միջոցներով։

Ծանօթ.—Դաշնակցութիւնը կընդունի պանդուխտ համագիւղացիներէ զինման հիմնագումարի համար նուէրներ, որոնք կը գործադրուին երկրի պատկան մարմնի ձեռքով, ոչ բացառապէս նուիրատուներու գիւղին, այլ շրջանի գիւղախմբի համար։

2) Եթէ նոր կազմակերպուած մարմինները վստահութիւն ներշնչեն իրենց գործունէութեամբ և կազմի հաստատուն հանգամանքով, Դաշնակցութիւնը կրնայ, եթէ պէտք տեսնէ, փոխ տալ շրջաբերութեան գումար մը՝ զէնքի շուկայ ստեղծելու համար։

Ծանօթ.—Դաշնակցութեան նախահաշուի մէջ կորուստի այդ նպատակին յատկացնելիք առաւելագոյն գումարի համակը։

3) Ինքնապաշտպանութեան խմբերու ձեռք բերած զէնքերը կը համարուին հայկական սեփականութիւն, կը գտնուին Դաշնակցութեան կօնտրոլի տակ և կը գործադրուին միմիայն անոր հրահանգներով։

4) Զինման գործը պէտք է կատարուի աստիճանաբար, ինքնապաշտպանութեան խումբերու կազմութեան և անոնց զինուորական կրթութեան զարգացման զուգընթաց։

ԱՐՇԱՒԱԽՄԲԵՐ

Ժողովը քննելով արշաւախմբերի խնդիրը, յանգաւ հետևեալ եզրակացութեան.

1) Ապագայում մեր մղելիք կռիւի մէջ, այլ և այլ յեղափոխական ձեռնարկների հետ միասին՝ արշաւախմբերն ևս կարող են օգտակար լինել երբ ներսի վարիչ մարմինները վստահ են, որ այդ խմբերը կը դարձնեն կռիւը ազգու, լայն և յարատև։

2) Միջոցներ ձեռք առնել՝ միլիցիայի սկզբունքով կամ այլ ձևով, առանց վարձի, մարտական դաշնակցական խմբեր մարզել՝ ապագայ այդ օրինակ գործողութիւնների համար։

ԿՈՎԿԱՍԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Ընդհանուր ժողովը, լսելով Կովկասի հայ ազգաբնակութեան ինքնապաշտպանութեան և զինման գործի մասին եղած զեկուցումները և վիճաբանութիւնները՝ յանգաւ հետևեալ որոշման՝

ա) Ինքնապաշտպանութեան գործը՝ իբրև համաժողովրդական գործ՝ պէտք է ամբողջովին թողնել ժողովրդին։

բ) Կուսակցութեան անդամները կարող են մասնակցել ինքնապաշտպանութեանը՝ իբրև քաղաքացի անհատներ, աշխատելով մտցնել ժողովրդական միլիցիայի սիստեմը և կազմակերպել ժողովրդական ինքնապաշտպանութեան մարմիններ։

գ) Անակնկալ դէպքերում, եթէ ժողովուրդը հրաւիրէ Դաշնակցութիւնը՝ ղեկավարելու ինքնապաշտպանութեան գործը, իր՝ ժողովրդի պատասխանատուութեամբ, նրա անունից և նրա միահամուռ աջակցութեամբ, Ընդհանուր Ժողովը վերապահում է պատուութիւն տեղական մարմիններին՝ վարելու ըստ իրենց հայեցողութեան։

ՅՈՒՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ժողովը լսելով ցուցական գործունէութեան վերաբերեալ զեկուցումներն ու վիճաբանութիւնները և նկատելով՝

ա) Այն մեծ նշանակութիւնը, որ ունի ցուցական գործունէութիւնը տաճիկ բռնակալ ըէժիմը տապալելու, նրա հեղինակութիւնը կոտրելու տեսակէտից,

բ) Որ ցուցական գործունէութիւնն աւելի բացորոշ կերպով է շարժման մէջ դնում Տաճկաստանի խնամակալ պետութիւնների քաղաքական և տնտեսական ընդհանուր և հակամարտ շահերը,

գ) Որ նա դիւրութիւններ է ներկայացնում աւելի ազդու կերպով արտայայտելու բողոքող տարրերի ձգտումները և այդպիսով ներկայանում է ագիտատորական մեծ ազդակ ցնցելու համար և մահմեդական մասսան,

դ) . . . . . .

Որոշեց՝

1) Ընդունել ցուցական գործունէութիւնը շարունակելու անհրաժեշտութիւնը կազմակերպութեան առաջիկայ տակտիքի մէջ,

2) . . . . . .

3) . . . . . .

4) Ձգտել ապահովել Թիւրքիայի ոչ-հայ դժգոհ տարրերի գործակցութիւնը,

5) . . . . . .

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժողովը ծանօթանալով . . . Դաշնակցութեան կազմի և պրօպագանդի այժմեան վիճակին և նկատելով՝

ա) Կազմի և պրօպագանդի սահմանափակ վիճակը.

բ) Այն խոշոր դերը, որ կարող է կատարել յեղափոխական գործունէութիւնը այդ վայրում, աչքի առաջ ունենալով վայրի քաղաքական կարևոր նշանակութիւնը.

Որոշեց՝

Յանձնարարել Կազմակերպական Մարմիններին, յատկապէս . . . Բիւրոյին և . . . Կոմիտէին չ'խնայել ոչ մի ջանք լայն կազմակերպութիւն առաջ բերելու . . . և շրջակայքում։

ՎԵՐՆԱՇԷՆԻ ՇՐՋԱՆ

. . . . . .

ԼԵՌՆԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

. . . . . .

ԲԱՍՏԻ ՇՐՋԱՆ

. . . . . .

ՍԻՄԻ ՇՐՋԱՆ

. . . . . .

ԶԻՆԱ-ՊԱՅԹՈՒՅԻԿ

Նկատելով որ անհրաժեշտ է մեր յեղափոխական ձեռնարկներու համար ունենալ ըստ կարելոյն շատ հմուտ արհեստաւորներ զինագործական-պայթուցիկ և

այլ յարակից արհեստներու համար, Ընդհանուր Ժողովը որոշեց.

1) . . . . . .

2) . . . . . .

3) . . . . . .

4) . . . . . .

ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ ԹԻՒՐՔԻՈՅ ԱՅԼԱՏԱՐՐ ՅԵՂԵՐՈՒ ՀԵՏ

Ընդհանուր Ժողովը լսելով զեկուցումը Թիւրքիոյ յեղափոխական տարրերու հետ համերաշխութիւն կայացնելու մասին, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Խորին ուրախութեամբ դիտելով Թիւրք ժողովրդի մէջ ծայր տուած հակակառավարական դժգոհութեան երեւոյթները, նպաստաւոր վայրկեանը հասած կը նկատի համերաշխութեան գաղափարի իրականացումը գործնական հողի վրայ դնելու—ինչ որ, դժբախտաբար, ցարդ չէր յաջողած Դաշնակցութեան՝ հակառակ տարիներէ ի վեր ձեռք առած միջոցներուն, հակառակ իր ծրագրին և նախորդ իր Ընդհանուր Ժողովի որոշումներուն։

Ուստի Ժողովը ստիպողաբար կը յանձնարարէ . . . . մարմիններուն ամէն կերպով աջակցիլ Թիւրք ժողովրդի դիմադիր տարրերուն՝ զեկավարելով զանոնք, իրենց կուռին մէջ, այդ բէժիմի դէմ։ Այդ գործակցութիւնը պէտք է այնպէս կարգաւորել և առաջ տանիլ որ Թիւրք բողոքող և ըմբոստ տարրը կարկառուն կերպով ասպարէզ ելլէ, և կառավարութիւնը զրկուի ամբոխային կրօնամոլութիւնը հայ ժողովրդի և հայ յեղափոխութեան դէմ գրգռելու առիթէն։

Այս տեսակէտներէն առաջնորդուելով՝ Ժողովը կը յանձնարարէ,

1) Իր . . . . . մարմիններուն, որպէսզի ամէն կերպ աշխատին սկիզբը դնելու համերաշխ գործակցութեան և առաջ բերեն համերաշխութեան մարմիններ։

2) . . . . . պատշաճ մարմիններուն՝ որպէսզի նախապատրաստական բանակցութիւններ սկսին—յարմարագոյն եղանակով—յեղափոխական Թիւրք և այլ տարրերու խմբակցութեանց հետ, որոնց քաղաքական հայեացքները և ձգտումները աւելի կը մօտենան Դաշնակցութեան սկզբունքներուն, ինչպէս նաև աշխատին անոնց պրոպագանդին ուժ տալ, տարածելով . . . . . Թիւրք ժողովրդին մէջ անոնց հրատարակութիւնները, հրահանգելով միանգամայն . . . . . մարմինները ամէն կերպով աջակցիլ այդ աշխատութեան։

3) . . . . . .

4) Նկատելով մանաւանդ որ Թիւրքիոյ մէջ առանձին ազգութիւններու ինքնուրոյն ձգտումները, իրենց անջատ գործունէութիւնով, չեն կազմեր միացած ընդհանուր ուժ մը ընդհանուր Թշնամուն դէմ, աշխատիլ ձգտիլ Թիւրքիոյ այլ ազգութիւններու յեղափոխական կուսակցութիւններու և տարրերու մէջ համերաշխութիւն առաջ բերել և կազմել յեղափոխական Դաշնակցութիւն մը, ֆեդերատիվ սկզբունքի վրայ հիմնուած քաղաքական ծրագրով, որ ապահովէ բոլոր ազգութիւններու իրաւունքը։ Այս գաղափարի իրականացման համար՝ առաջին պատեհութեամբ իսկ հրաւիրել համաժողով մը վերոյիշեալ տարրերու մասնակցութեամբ։

Մինչեւ ոտեն Թիւրքերու մէջ տարածուած անհիմն Թիւրիմացութիւններուն վերջ տալու համար, ժողովը պարտք կը համարի յայտարարել, որ Դաշնակցութիւնը Թիւրքիոյ մէջ ունեցած չէ և չունի անջատական ոչ մէկ ձգտում, այլ իր նպատակն է եղած ազգերու կատարեալ հաւասարութիւն, և տեղական լայն ինքնավարութեան սկզբունքի համաձայն՝ հայկական վեց վիլայէթներու մէջ վարչական ինքնավարութեան հաստատումը, ինչ որ չը հակասեր միւս ազգերու իրաւունքին։

ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

Քննութեան առնելով կովկասեան մարմինների ժանրամասն զեկուցումները Հայ-Թրքական ընդհարումների մասին, որոնք աղմկեցին ամբողջ Անդրկովկասը 1905 և 1906 թուականներին, Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը, լցուած խորագոյն վշտով երկու հարևան ժողովուրդները կործանող այդ իրողութեան հանդէպ, և նկատելով որ,

1) Այդ թշնամութիւնը զգալապէս վնասում է ընդհանուր յեղափոխութեան գործին.

2) Որ ցարական կառավարութիւնը բոլորովին տրամադիր չէ հրաժարուել իր պառակտող քաղաքականութիւնից.

3) Որ Թուրք անգիտակից ամբոխը հարստահարող բէգութիւնն ու հոգևորականութիւնը, մերթ իրենց շահերից դրդուած, մերթ արտաքին քաղաքական պրոպագանդի ազդեցութեան տակ, շարունակում են շահագործել մասսաների տգիտութիւնն ու հակահայկական տրամադրութիւնները.

Որոշեց,

ա) Յանձնարարել դաշնակցական բոլոր մարմիններին՝ համերաշխութեան ընդհանուր և զօրեղ պրոպագանդ մղել, գրաւոր և բանաւոր, ոչ միայն հայ, այլև Թուրք ժողովրդի համար։

բ) Ջանք չը խնայել առաջ բերելու, ուղղակի կամ Թիւրք մտաւորականութեան միջոցով, յեղափոխական կազմակերպութիւններ մեր հարևան ժողովրդի շարքերում, իբրև լաւագոյն միջոց՝ խլելու անգիտակից մասսաները մոլորեցնող Թուրք տարրերի ազդեցութիւնից։

գ) Խստօրէն հալածել հայ ժողովրդի բոլոր խաւերի միջից այն տարրերն, օրգանները և անհատները, որոնք խօսքով թէ գործով, յաճախ անգիտակցաբար, գրգռում են փոխադարձ ատելութիւն և առիթ տալիս թշնամութեան վերսկսման։

դ) Աջակցիլ այն Թուրք կազմակերպութիւններին, հրատարակութիւններին և անհատներին, որոնք ծառա-

յում են երկու ժողովուրդների համերաշխութեանը և մերձեցմանը։

ե) Յեղափոխական կապեր հաստատել հայ և թուրք աշխատաւորների միջև՝ քաղաքներում և գիւղացիութեան մէջ՝ գիւղերում, միացած ուժով կռիւ մղելու քաղաքական և տնտեսական այն գործոնների դէմ, որոնք կասեցնում են երկու ժողովուրդների քաղաքական և տնտեսական ազատագրութիւնը։

Այս յանձնարարման հետ միասին՝ Ընդհանուր Ժողովը ջերմ յոյս է տածում, որ հակառակ ընթացիկ դժուարութիւնների և լայնատարած յուսահատութեան, այսօրուայ ատելութիւնն ու պառակտումը կ'ընկճուին և տեղի կը տան միջազգային այն համերաշխութեան, որը պիտի լինի ամենաշտապ ու ամենաարագ պատասխանը մեր ապագայ կռիւի ու երկու ժողովուրդների յեղափոխական յաղթանակին։

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ՎՐԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ

Խորապէս կողմնակից հայերի և վրացիների քաղաքական ներդաշնակ գործակցութեան, Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը հրահանգում է կուսակցութեան բոլոր մարմիններին և ընկերներին, իրենց յեղափոխական գործունէութիւնների, ինչպէս և գրաւոր ու բերանացի պրոպագանդի ընթացքում՝ երբէք չը մոռանալ այն ներդիպը որ պիտի լինի վրացի և հայ աշխատաւորների միջև, հանդէպ քաղաքական և տնտեսական այն կռիւի, որով բռնկուած է Անդրկովկասը։

Կապուած միմեանց հետ հայրենիքով, քաղաքական և տնտեսական շահերով, նոյնիսկ կռիւի տակտիքով, երկու ժողովուրդները պէտք է գործեն ձեռք-ձեռքի տուած, ներշնչուած նոյն տենչով և հետևաբար, փոխադարձ անհամաձայնութեան և դժտութեան ամենափոքրագոյն նշանն անգամ պիտի նկատուի քաղաքական մեծ սխալ երկու ժողովուրդների համար։

Դրդուած այս տեսակէտներից՝ Ընդհանուր Ժողովը թելադրում է Դաշնակցական ղեկավար մարմիններին՝ ամենամօտիկ կապեր հաստատել և, ի հարկին, ձեռնարկներ անել վրաց ժողովրդի մէջ գոյութիւն ունեցող յեղափոխական և սոցիալիստական կուսակցութիւնների հետ, դուրս չը գալով, հարկաւ, մեր ծրագրի և տակտիքի սահմաններից։

Շեշտելով իր այդ անվերապահ ցանկութիւնը, Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովը ստիպուած է, անկեղծ ցաւով, մատնանիշ անել այն փաստը, որ Վրաց մէջ գործող կուսակցութիւններից ամենախոշորը, ռուսական սոցիալ-դեմոկրատիայի կովկասեան բաժինը, հակառակ այն վարդապետութեան ոգուն, որի դրօշակիրն է ուզում հանդիսանալ, իր գործելակերպով, որ հեռու է շիտակութիւնից, և իր պրոպագանդի ձևով, որ յաճախ շովինիզմի կնիքն է կրում, փոխանակ նպաստելու երկու ժողովուրդների քաղաքական համերաշխ գործակցութեան, սերմանում է անօգուտ գրգռումն, անվստահութիւն և նոյնիսկ թշնամանք։

Առանց հետևելու կովկասեան սոցիալ-դեմոկրատների գործելակերպին և շեղուելու քաղաքական շիտակ պայքարի շաւղից, Դաշնակցութեան բոլոր մարմինները հրաւիրուում են՝ մերկացնելով հանդերձ սոցիալ-դեմոկրատական գործելակերպի ամբողջ տգեղութիւնը, անսասան և անյողդողդ առաջ տանել երկու դրկից ժողովուրդների ներդաշնակ գործակցութեան աշխատանքը, միշտ հաւատարիմ սոցիալիզմի և համերաշխութեան հիմնական պահանջներին։

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՏ

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Անհրաժեշտ համարելով, մանաւանդ ներկայ քաղաքական մոմենտում յեղափոխական տարրերի միութիւնը ընդդէմ բռնակալական կարգերի, Ժողովը յանձնարարում է իր կովկասեան մարմիններին, աշխատել՝ գործակցութիւն առաջ բերել սոցիալիստական և յեղափոխական այն կուսակցութիւնների ու կազմակերպութիւնների միջև, որոնք իրենց դաւանանքով ու գործելակերպով մօտ են Հ. Յ. Դաշնակցութեան, այսինքն,

1) Ընդունում են աշխատաւորական հայեցակէտը և իբրև գործունէութեան յենակէտ, ի թիւս այլ աշխատաւորների, նաև գիւղացիութիւնը։

2) Ձգտում են ազգային հարցը լուծելու ամենալայն ֆեդերացիայի միջոցով։

Այդ գործակցութեան նշանաբանն է լինելու՝ պաշտպանել համայն Ռուսաստանի աշխատաւոր ժողովրդի շահերը թէ պետական Դումայում՝ և թէ ընթացիկ կեանքում։

Այդ տեսակ գործունէութիւնը օր առաջ իրականալի դարձնելու նպատակով, Ժողովը հրաւիրում է իր պատշաճ մարմիններին՝ ձգտել միջկուսակցական մի մնայուն մարմին կազմակերպել, իբրև շաղկապող օղակ յիշեալ աշխատաւորական տարրերի միջև։

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՏԵԱՆ

Ընդհ. Ժողովը, բարձր պահելու համար յեղափոխական հմայքը և վերջ մը դնելու համար վերջերս տեղի ունեցած ցաւալի դէպքերուն, պարտաւորիչ կը դարձնէ միջկուսակցական իրաւարար ատեանները Հ. Յ. Դաշնակցութեան և ուրիշ կուսակցութիւններու կամ խմբակցութիւններու միջև, համաձայն հետևեալ կէտերուն՝

1) Միջկուսակցական ատեանները կը կազմուին շահագրգռող կողմերու ներկայացուցիչներէ, չէզոք ձեռնհաս անձերէ կամ ուրիշ կուսակցութիւններու ներկայացուցիչներէ, ըստ յարմարութեան։

2) Միջկուսակցական ատեանները կը կազմուին շրջանի պատասխանատու մարմնի հաւանութեամբ և գործակցութեամբ, ընդհանուր տեսակէտ մը պահպանելու համար այդ գործին մէջ։

3) Միջկուսակցական իրաւարար ատեան ունենալ այնպիսի կուսակցութիւններու կամ խմբակցութիւններու հետ, որոնք կը համակերպին այդ ատեաններու որոշումներուն՝ առանց պարագայի տակ, և խոյս չեն տար այդ ատեաններուն ենթարկուելէ, իրենց աննպաստ եղող պարագային։

4) Միջկուսակցական ատեաններու որոշումներն անբեկանելի են և չեն ենթարկուիր Ընդհանուր Ժողովին։

5) Ատեաններու կազմութեան մանրամասնութիւնները մշակելը կը թողնուի բայօնական ժողովներուն։

ՀՆՉԱԿԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԴԻՄՈՒՄԸ

Լսելով Հնչակեան Պարիզի կեդրոնի վարչութեան պաշտօնական դիմումը, ուղղուած Ընդհ. Ժողովին՝ Հայ Յեղ. Կուսակցութիւնների կօնգրէսի, Մի՛ջկուսակցական ատեանի և Համերաշխութեան մասին, ինչպէս և այդ առիթով ժողովականների յայտնած կարծիքները Հնչակեան այլևայլ հատուածների բռնած ընթացքի և զանազան վայրերում ունեցած գործունէութեան վերաբերմամբ, Ընդհ. Ժողովը,

1) Նկատելով որ Դաշնակցութեան և Հնչակեան հատուածների մէջ համերաշխ գործակցութիւնը կարող է տեղի ունենալ միայն այն դէպքում, երբ Հնչակեան տեղական մարմիններն իրենց առօրեայ ընթացքով և յեղափոխական գործունէութեամբ վստահութիւն կը ներշնչեն Դաշնակցական տեղական մարմիններին,

2) Նկատելով որ կուսակցական հողի վրայ տեղի ունեցած ընդհարումները իրենց ցաւալի հետևանքներով, վնասում են համերաշխութեան գործին և պահանջում են խաղաղեցնող միջոցների կիրառութիւն,

3) Ընդունելով որ Յեղ. կուսակցութիւնների կօնգրէսի հարցը լուրջ նշանակութիւն և գործնական արժէք կարող է ունենալ այն դէպքում միայն, երբ երկրում, բացի դաշնակցական մարմիններից, գոյութիւն կունենան նաև Հնչակեան և այլ յեղափոխական մարմիններ,

Որոշեց.

ա) Հայ Յեղափոխական կուսակցութիւնների կօնգրէսի գումարումը ներկայումս համարել վաղաժամ։

բ) Միջկուսակցական ատեանի առաջարկը ընդունել (համաձայն ներկայ ժողովի նախորդ որոշման)։

Դրա հետ միասին ժողովը յոյս է յայտնում որ առաջին կէտում յիշուած պայմանների առաջ գալը՝ ապագայում հնարաւոր կը դարձնեն Դաշնակցութեան համերաշխ գործակցութիւնը հայ յեղափոխական այլ մարմինների հետ։

Ընդհանուր Ժողովը պարտք է համարում դարձեալ մի անգամ կրկնել, որ այլևայլ յեղափոխական կազմակերպութիւններին պատկանող՝ գործին նուիրուած և վստահելի անհատների և խմբերի հետ համերաշխորէն կռիւ մղելը ընդհանուր թշնամու դէմ (մանաւանդ Երկրի մէջ) եղել է և այժմ էլ պէտք է լինի Դաշնակցութեան բաղձանքը և ձգտումը։

Նոյն այդ համերաշխութեան գործը պատրաստելու համար, Ընդհ. Ժողովը յանձնարարում է բոլոր իր մարմիններին՝ ամէն կերպ խոյս տալ կուսակցական ընդհարումներից և ծագող վէճերն ու թիւրիմացութիւնները լուծել յիշատակուած միջկուսակցական ատեանի միջոցով։

ՊՐՕՊԱԳԱՆԴ

ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հիմնուած այն տեսակէտի վրայ, որ գրաւոր և բանաւոր լայն պրօպագանդը կարևոր գործօններից մէկը պիտի լինի, կազմակերպական գաղափարները տարածելու և ձեռնարկները աջողցնելու համար, Ընդհանուր Ժողովը որոշեց առաջիկայում ևս ուժգին կերպով առաջ մղել պրօպագանդի գործը այն հիմունքներով, որոնք մշակուած են նախորդ ժողովում և այն լրացումներով՝ որոնք կատարուեցին ներկայ ժողովի ընթացքում.

ա) ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՐՕՊԱԳԱՆԴ

. . . . . .

բ) ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊՐՕՊԱԳԱՆԴ

. . . . . .

գ) ԿՈՎԿԱՍԵԱՆ ՊՐՕՊԱԳԱՆԴ

. . . . . .

դ) ՊՐՕՊԱԳԱՆԴ ԵՐԿՐՈՒՄ

. . . . . .

Համապատասխան մարմիններու յանձնելով թէ գրաւոր թէ բանաւոր պրօպագանդի գործը, որոշած նախահաշիւ սահմաններում, Ընդհ. Ժողովը յանձնարարում է ղեկավարել հետևեալ որոշումներով.

I

„ԴՐՕՇԱԿ“ ԵՒ ԿԻՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) „Դրօշակ“-ը մնում է կուսակցութեան պաշտօնական կեդրոնական օրգան։

2) . . . . . .

3) Արտօնել խմբագրութեանը, եթէ հարկ տեսնի, „Դրօշակը“ հրատարակել աւելի մեծ ծաւալով՝ և ի հարկին՝ անել յաւելուածներ։

4) Ճշտութեամբ հետևելով Ընդհ. Ժողովի նախագծած ուղղութեան, աղատութիւն տալ խմբագրութեանը՝ մտնելու ինչպէս ծրագրային, նոյնպէս և տնտեսական-քաղաքական հարցերի և ուղղութիւնների մանրամասն մեկնաբանութեան և քննադատութեան մէջ։ Տեսական խնդիրները նրա մէջ պիտի բռնեն առաջնակարգ տեղերից մէկը։

5) Պարտաւորեցնել բոլոր մարմիններին՝ հաղորդելու պաշտօնական օրգանին կազմակերպական բոլոր ազդերը, որոշումները և թռուցիկները։ Պաշտօնական բնոյթ ունեցող ազդերը չտպագրել՝ որևէ այլ թերթում, առանց հեղինակող մարմնի թոյլտուութեան։

6) . . . . . .

7) . . . . . .

8) Տեսական և հիմնական հարցերի մանրամասն ուսումնասիրութեան համար՝ հրատարակել „Դրօշակ“-ին կից, տարեկան 2—3 անգամ, հատորի ձևով, առանձին հանդէս, մասնակցութեամբ մեր և օտար գրողների։

9) Նկատի առնելով մամուլի այժմեան՝ համեմատաբար ազատ վիճակը Անդրկովկասում, հայերէն բրօշիւրների հրատարակութիւնը ծրնեվում սահմանափակել և հրատարակել միմիայն այնպիսիները, որոնք Կովկասում տպագրել չեն կարող։

10) Հրատարակել, պրօպագանդային նպատակով, թիւրքահայ և Կովկասեան շարժման և յեղափոխութեան նուիրուած գրքոյկներ, եւրոպական զանազան լեզուներով, գրուած ձեռնհաս անձանց ձեռքով։

11) Ոյժ տալ թուրքերէն, քիւրդերէն, ֆարսերէն և այլ լեզուներով բրօշիւրներին, որոնց նպատակը պիտի լինի նը-պաստել հայերի հետ ապրող այլ և այլ ժողովուրդների համերաշխութեան և մերձեցման։

II

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակել Կովկասում,

1) Մի օրաթերթ, որ հանդիսանալով օրգան Հ. Յ.

Դաշնակցութեան Կովկասեան շրջանի, արձագանք պիտի տայ ընթացիկ տնտեսական-քաղաքական-հասարակական բոլոր հարցերին՝ ղեկավար ունենալով մեր աշխարհայեացքը և արծարծելով մեր կուսակցութեան սկզբունքը։

2) Մի ամսագիր—հասարակական, գիտական, գրական—որի ծաւալի, բաժնեգնի և այլ մանրամասնութիւնների որոշումը թողնել Կովկասեան բայօնական ժողովին։

3) Մի ռուսերէն թերթ (շաբաթաթերթ կամ օրաթերթ), որի բուն նպատակն է լինելու պարզաբանել հայ կեանքն և առանձնապէս Հ. Յ. Դաշնակցութեան իսկական պատկերը Ռուսաստանի հասարակութեան առաջ։

4) Շարունակել „Յառաջի" գրաքարանի հրատարակութիւնը (առնուազն 100 տպագրական թերթ—3000 երես տարեկան), լոյս ընծայել մեր ծրագրին և գործելակերպին համապատասխան ինքնուրոյն և թարգմանական գրուածքներ, գիտական-հասարակական ընդհանուր հարցերի շարքերում՝ կարևոր տեղ տալով նաև տաճկահայ դատի և Երկրի տնտեսական-սոցիալական ուսումնասիրութեան վերաբերեալ աշխատութիւններին (տաճկահայ բարբառով և.)։

III

ՕՐԳԱՆՆԵՐ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Ժողովը որոշեց.

1) Շարունակել . . . . . .

հրատարակութիւնը՝ ճանաչելով թէ օրգանի և թէ խմբագրական մարմնի մատուցած կարևոր ծառայութիւնները հայոց հարցին։

2) . . . . . .

3) Մոցնել այդ օրգանների մէջ տեղեկութիւններ՝ Դաշնակցութեան գործունէութեան մասին։

4) . . . . . .

5) Փակել Լօնդոնի „Pro Armenia"ի հարցը, և նրա հրատարակութիւնը համարել ներկայ պայմաններում, անկարևոր, յանձնելով անգլիական պրօպագանդի գործը . . .

6) Եւրոպական մամուլի մէջ պրօպագանդ անելու համար, բիւրջէի սահմանած չափով, թղթակիցներ պահել։

7) Դրամապէս նպաստել . . . . . հրատարակող թերթին՝ կբաղելու մեր հարցով։

—

Աչքի առաջ ունենալով Ռուսաստանում առաջ եկած բարեփոխութիւնները, Ժողովը յանձնարարում է պատշաճ մարմիններին՝ ուշադրութիւն դարձնել նաև այն պրօպագանդի վրայ, որ կարող է կատարուել Ռուսաստանում՝ դիմադիր տարրերի աջակցութեամբ։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԲՌՆԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՆ

Լսելով բռնի հանգանակութեան մասին եղած զեկուցումն ու վիճաբանութիւնները, Ընդհանուր Ժողովը աչքի առաջ ունենալով՝

1) 1904 թւի Ընդհ. Ժողովի որոշումը, ուր այդ ձևի հանգանակութիւնը նկատուած է իբրև բացարձակ չարիք.

2) 1905 թւի Խորհուրդի վճիռը, որը կարգադրում է „դադարեցնել Դրամ կոմիտէի կողմից նոր դիմումներ անելը"։

Այլև նկատելով՝

1) Այն բարոյական լքումը, որ առաջ է բերել բռնի հանգանակութիւնը հասարակական լայն խաւերում՝ թուլացնելով միաժամանակ մարմինների գործունէութիւնը.

2) Դաշնակցութեան և այլ մարմինների ունեցած դառն փորձերը, հակայեղափոխական հետևանքները...

Որոշեց՝

1) Խստօրէն արգելել բռնի միջոցների գործածութիւնը՝ հանգանակութեան գործում.

2) Ամենախիստ պատասխանատուութեան ենթարկել այն անդամներին և մարմիններին, որոնք կը շարունակեն դիմել բռնի միջոցների.

3) Ազգու միջոցներ ձեռք առնել վերջ տալու այն բռնի հանգանակութիւններին, որ կատարում են այլ և այլ բաղդախնդիրներ, կազմակերպութեան անունից, գաղտնի կամ խարդախ միջոցներով.

4) Ժողովի այս որոշումը յայտարարել կազմակերպութեան պաշտօնական օրգանի մէջ։

„ՆԱԽԱԳԻԾԸ" ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԻՐԱՒԱՍՈՒԹԻՆԸ

Ընդհանուր Ժողովը, լսելով ներկայացրած զեկուցումը՝ „Խորհուրդի իրաւասութեան մասին՝ Նախագծի հրատարակութեան գործում" և այս առթիւ տեղի ունեցած կարծիքների փոխանակութիւնն ու վիճաբանութիւնները՝ հասաւ հետևեալ եզրակացութեան.

Խորհուրդը՝ հիմնուելով Դաշնակցութեան հիմնական Ծրագրի, գ. Ընդհանուր Ժողովի կողմից Կովկասեան գործունէութեան մասին տուած որոշումների ոգու, Կովկասեան շրջանային Ժողովի այս առթիւ տուած որոշումների, ինչպէս նաև կեանքի հրամայողական պահանջների վրայ, պարտաւոր էր հրատարակել „Կովկասեան Նախագիծը" իբրև ուղեցոյց Կովկասահայ կեանքի քաղաքական և տնտեսական գործունէութեան, վերապահելով նրա վերջնական հաստատութիւնը ներկայ Ընդհանուր Ժողովին։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԻՒՐՕ

Ընդհանուր Ժողովը լսելով Բրիւքսէլի Միջազգային Սոցիալիստական Բիւրոյի կողմից եղած առաջարկը (տես „Դրօշակ" 1905 № 6) և հիմնուելով մեր ծրագրի

հիմնական կէտերի վրայ, որոշեց՝ Յանձնարարել Արևմտեան Բիւրոյին՝ բանակցութեան մէջ մտնել յիշեալ Բիւրոյի հետ, յայտնել նրան՝ Դաշնակցութեան յարումը Միջազգային Սոցիալիստական կոնգրէսների որոշումներին և միջոցներ ձեռք առնել կարգաւորելու Դաշնակցութեան մասնակցութիւնը Միջազգային Սոցիալիստական Բիւրոյին և կոնգրէսներին։

ԵՐԿՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Ընդհանուր ժողովը լսելով՝

Երկիրը ուսումնասիրելու և այնտեղ ուսումնասիրողներ ուղարկելու մասին և կատարելով այդ առիթով մտքերի փոխանակութիւն՝ յանգեց հետևեալ եզրակացութեան.

1) Դնել այդ ուսումնասիրութիւնը՝ գլխաւորապէս վիճակագրական և ռազմական-յեղափոխական տեսակէտից՝ աւելի լայն և գիտական հիմքերի վրայ.

2) Պատրաստել մի հարցարան-ծրագիր և ուղարկել երկրի մարմիններին և ընկերներին՝ վիճակագրական, ազգագրական, տնտեսագիտական և քաղաքական ուսումնասիրութիւններ անելու համար։

3) . . . . . .

4) Բոլոր միջոցներով նպաստել մտաւորական ընկերների . . . . մտնելուն աւելի մեծ թւով՝ նախօրօք պատրաստելով նրանց՝ այդ աշխատանքի համար։

5) Անհրաժեշտօրէն պատրաստել հայկական գաւառների մանրամասն և մեծադիր քարտէզ։

6) Կազմել մի յատուկ մարմին „Ուսումնասիրող Մալ մին“ անունով, այդ ամբողջ գործը կարգադրելու համար, հիմնուած վերի որոշումների վրայ։

ԱՌԱՋԻԿԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ընդհանուր ժողովը մտքերի փոխանակութիւնից յետոյ, որոշեց.

1) Առաջիկայ, Հինգերորդ Ընդհանուր ժողովը նշանակել գալ տարւայ վերջերը, ոչ ուշ քան 1908-ի աշունը։

2) Ընդհանուր ժողովի տեղի որոշումը թողնել երկու Բիւրոներին, հրահանգելով որ ամէն ջանք գործ դրուի ժողովը կայացնելու . . . . . սահմաններում, Երկրին մօտիկ։

3) Արտակարգ պարագաների դէպքում թողնել Խորհուրդին՝ հրաւիրելու արտակարգ Ընդհանուր ժողով։

ԳԱՂՈՒԹՆԵՐ

Ընդհանուր ժողովը քննելով Բալկանի, Ամերիկայի, Եգիպտոսի, Պարսկաստանի և հարաւային Ռուսաստանի դաղութների մասին ներկայացրած զեկուցումները՝ յանձնարարում է իր այնտեղի մարմիններին.

1) Կազմակերպական-դրամական աշխատանքներին կից հիմնադրել մի լայն պրօպագանդ, դրաւոր և բերանացի, նպատակ ունենալով տարածել մեր ծրագրի սկզբունքները և սերտ կերպով կապել գաղութները յեղափոխական գործի հետ։

2) Ոչինչ ջանք չխնայել՝ յարաբերութեան մէջ դնելու հայ գաղութները՝ տեղական աշխատաւորական շրջանների և սոցիալիստական կազմակերպութիւնների հետ, իբրև մի ցանկալի մեթոդ փոխադարձ համերաշխութիւնը զօրացնելու համար։

3) Տեղական և օտար մամուլի մէջ պրօպագանդ մղել յօգուտ հայ ժողովրդի դատի, ինչպէս և այն քաղաքական նպատակի, որին ձգտում է Դաշնակցութիւնը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Նկատելով որ պարսկական ներկայ շարժումը կարող է դառնալ ժողովրդական արթնացման բնոյթ ունեցող հասարակական խոշոր երևոյթ՝ թէ Պարսկաստանի, թէ Արևելքի համար և գտնելով դրա տարածումն ու լայնալը ցանկալի թէ համամարդկային, թէ հայկական տեսակէտից,

Ընդհանուր ժողովը յանձնարարում է Պարսկաստանի դաշնակցական մարմիններին և անհատներին՝ բոլոր միջոցներով նպաստել այդ շարժման զարգացման, մտցնելով պարսկական արթնացման մէջ այն ազատագրական, ռամկավարական և աշխատաւորական ոգին, որը լցնում է Դաշնակցութեան ծրագրից։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹԻՒՆ

Քրիստափոր Միքայէլեանի յիշատակին

Ընդհանուր ժողովը հաճոյքով լսեց Կովկասեան բարօնական ժողովի որոշումը և Երևանի ընկերների առաջարկը՝ մեր անմոռանալի ընկեր Քրիստափոր Միքայէլեանի ընտանիքը ապահովելու մասին, ու աչքի առաջ ունենալով, որ այդ հոգսը մինչև այժմ ծանրացած է եղել հանգուցեալի անձնական ընկերների վրայ, և որ այդ եղանակով դժուար է ապահով պայմանների մէջ դնել նրա զաւակի կրթութեան գործը, այլ և այն, որ կազմակերպութեան համար բարոյական պարտաւորութեան խնդիր է՝ օգուտ բերելով այս առիթից՝ արտայայտելու յարգանք մեր ընկերոջ թանկագին յիշատակին, որոշեց՝ կուսակցութեան վրայ առնել այդ գործի կարգաւորութիւնը ու պարտաւորեցնել Թիֆլիզի և Բաքուի մեր մարմիններին՝ անյապաղ գործի դլուխ անցնել և ամենաուշը՝ մինչև 1907 թուի վերջը, կողմնակի միջոցներով, կազմել մի ֆոնդ և յատկացնել այդ՝ Քրիստափորի ընտանիքի ապահովութեան և նրա զաւակի ուսման գործին։

Յանձնարարել Վ....ի և Տ....ի մարմիններին, ինչպէս և Արևելեան Բիւրոյին, բարոյական աջակցութիւն ցոյց տալ մեր անմոռանալի ընկերներ Ս-ի և Հ-ի ընտանիքներին՝ հոգալով կողմնակի կամ, եթէ այդ անհնար լինի, „կարմիր խաչի“ միջոցներով, նրանց զաւակների ուսման գործը. . . . . .

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

ԴԺԳՈՀՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ԲՈՂՈՔՆԵՐ

Մանրաման քննութեան առնելով դժգոհութիւնների ու բողոքների այն փաստերը, որոնք արձանագրուած են տեղեկագրերի ու անհատական դիմումների մէջ, Ընդհանուր Ժողովը, ամէն մի կարեւոր դէպքի համար յատուկ կարգադրութիւն անելով, միաժամանակ որոշեց.

1) Ցանձնարարել Դաշնակցական բոլոր մարմիններին՝ հաղորդելու ի գիտութիւն իրանց շրջանի հասարակութեան, որ ոչ մի գեղծում, բռնութիւն և անկանոնութիւն, կատարուած անհատների և խմբերի կողմից, չի մնայ առանց անկողմնապահ քննութեան և խիստ պատժի։

2) Դիւրութիւն տալ, որ ամէն ոք, կուսակցական թէ անկուսակցական, հնարաւորութիւն ունենայ, կազմակերպութեան ղեկավարող մարմիններին իմաց տալու ժողովրդի մէջ եղած դանգատներն ու բողոքները։

3) Ցանձնել Արևելեան և Արևմտեան բիւրօներին, իբրև Ընդհանուր Ժողովի որոշումների ճիշտ գործադրութեան վրայ հսկող օրգաններ, պատասխանատուութեան կանչել այն բոլոր Դաշնակցականներին—զինուոր, պրօպագանդիստ, հայդուկ, կազմակերպող—որոնք իրենց քայլերով արդար բողոքի առիթ են տալիս, ինչպէս և այն մարմիններին, որոնք վարագուրում են այդ տեսակ քայլերը կամ թերանում պատժելու նրանց հեղինակներին։

Ընդհանուր Ժողովը լիայոյս է որ իր այս հրահանգի ճիշտ կիրառութեամբ՝ կարելի պիտի լինի արմատախիլ անել կուսակցութեան անուան հետ, յաճախ անհիմն կերպով, կապող զեղծումները, և ներշնչել հայ ժողովրդի բոլոր խաւերին այն գիտակից վստահութիւնը, որ միշտ վայելել է Դաշնակցութիւնը ոչ միայն կողմնակիցների այլ և աղնիւ հակառակորդների կողմից։

ՈՐՈՇՈՒՄ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ

Ընդհանուր Ժողովը նկատի առնելով Ցուցական մարմնի տեղեկագիրը, Քննիչ Ցանձնախումբի զեկուցագիրը, իր բոլոր յարակից դօկիւմաններով, ինչպէս նաև Ցուցական մարմնի ներկայացուցիչ Սաֆոյի պատասխան-զեկուցումը Ցանձնախումբի եզրակացութիւններուն, և նոյն մարմնի անդամներու՝ . . . . . բերանացի յայտարարութիւնները, որոշեց.

Զը ծանրանալ ձեռնարկին տեխնիքական կողմի մանրակրկիտ ուսումնասիրութեան վրայ, և քննութեան առնել Ցուցական մարմնի գործունէութեան կազմակերպական և ընկերական-բարոյական կրկին տեսակէտները։ Ուստի,

1) Նկատելով որ Ցուցական մարմնի անդամները, Էլլէնի մահէն ետք, „ձեռնարկի" պատրաստութեան վերաբերեալ իրենց բոլոր խորհուրդներուն և անոնց կիրառութեան մէջ, փոխանակ ամէն հնարաւոր միջոց ձեռք առնելու, ձեռնարկին յաջողութեան հաւանականութիւնները բազմապատկելու, ընդհակառակը՝ տարաձեռ մտահոգութիւնը ունեցած են, ամէն բանէ առաջ, իրենց անձերու փրկութիւնը ապահովել, խուսափելով իրենց ստանձնած մեծ պատասխանատուութենէն.

2) Նկատելով՝ որ լոկ իրենց գլուխն ազատելու այդ սեւեռուն գաղափարէն մղուած, Ցուցական մարմնի անդամները գիտակից անհոգութեամբ մը թերացեր են ուշադրութեան առնելու և ըստ այնմ կանխել կամ մեղմել փորձելու այն վտանգները, որոնք կսպառնային նաև նոյն վայրը գործող օժանդակ ընկերներուն, ընկերներ՝ որոնք դատապարտուեցան մահուան և երկարատև բանտարկութեան պատիժներու.

3) Նկատելով որ Ցուցական մարմինը իր ընկերական յարաբերութիւններուն մէջ ընդհանրապէս այլանդակ վարմունք մը ցուցադրած է, և ինչ որ մասնաւորապէս եղական է Դաշնակցութեան տարեգրութիւններուն մէջ՝ այն վրդովիչ ընթացքն է, որով այդ մարմինը հետաքրքրուած է, թէ գրաւոր կերպով (Վ. . .-ի ատենագրութեան մէջ) և թէ բերանացի տարաձայնութիւններով, արատաւորել Թանկագին յիշատակը պարտականութեան դաշտին վրայ ինկած մեր անմոռանալի ընկեր Էլլէնին, Ս. . . -ի դժբախտ արկածը ներկայացնելով իբր դաւ մը՝ նիւթած Էլլէնի կողմէ Շապուհի դէմ.

Ժողովը լուսաբանուած համարեց Ցուցական մարմնի ծանրը թերացումը ընկերական պարտականութիւններու մէջ և անոր պատասխանատուութիւնը „ձեռնարկի" անյաջողութեան մէջ, այն չափով որ այդ արդիւնք էր այդ մարմնի անդամներու անձնիւրութեան պակասին, պէտք չը տեսաւ անդրադարձ քննութեան և դատի։

Միևնոյն ատեն, աներկդիմի կերպով ապացուցած գտնելով որ Սաֆօն եղած է ղեկավար Էլլէնի մահէն ետք Ցուցական մարմնի գործերուն, պատրաստողը՝ այդ մարմնի դօկիւմաններուն, հեղինակը՝ Էլլէնի և Շապուհի մահուան շուրջը կուտակուած կասկածներուն և զրպարտութեան, և գլխաւոր ստեղծիչը այդ մարմնի շուրջը տիրող անբարոյական հեղձուցիչ մթնոլորտին։

Վճռեց

1) Ցուցական մարմնի անդամ Սաֆօն խստօրէն արտաքսել Հ. Յ. Դաշնակցութենէն և այդ մասին յայտարարել պաշտօնական օրգանին մէջ։

2) . . . . . .

3) . . . . . .

„ՎԱՐԴՕԻ ԽՆԴԻՐԸ"

Ընդհանուր Ժողովը, ապրիլի 28-ի նիստի մէջ, լսելով Վարդօի գործին համար կազմուած Դատական Յանձնաժողովի մանրաման զեկուցումը՝ եկաւ հետեւեալ եզրակացութեան.

1) Նկատելով, որ պաշտօնական թէ անպաշտօն բազմաթիւ փաստաթղթեր կհաստատեն Վարդօի անարդարանալի մեղաւորութիւնը՝ գիտակցաբար իւրացուցած և իւր անձնական պէտքերուն ծախսած ըլլալուն համար Բալկանի կեդր. կոմիտէի 2139 ոսկի լիրայ և 4673 արծաթ լիրայ, ինչպէս նաև արևելեան Բիւրօյի կողմէն

իրեն խրկուած՝ կազմակերպական 2000 ռուբլին,—ընդամենը՝ 12,112 ֆրանկ.

2) Նկատելով որ դրամական այս յայտնի զեղծումներէն զատ՝ Վարդօն շահագործած է նոյնիսկ նահատակ ընկերոջ մը՝ Պետրոս Սերէմճեանի յիշատակը, հանգանակութիւն բանալով իւր թերթին մէջ՝ հրատարակելու համար նոյն ընկերոջ գրութիւններուն հաւաքածուն, և այդ հանգանակութենէ գոյացած հանրային դրամն ևս իւրացուցած է առանց յատկացնելու իսկական նպատակին.

3) Նկատելով վերջապէս որ Վարդօն իւր բոլոր անմաքուր գործերը և, մանաւանդ, իւր զեղծումները չքմեղելու համար հանրային կարծիքին առջև՝ դիմած է ամէն տեսակ անորակելի միջոցներու՝ ջանալով արատաւորել Դաշնակցութիւնը, Դաշնակցական ամենամաքուր գործիչները, նկրտելով կասկածի ստուեր ձգել անոնց գործունէութեան վրայ, անանարկութեան ու խեղաթիւրման հակասական ամէն փորձ ի գործ դնելով իւր թերթին մէջ,

Ո ր ո շ ե ց.

Հաստատել դատական յանձնաժողովի եզրակացութիւնը և Բալկանի շրջանային ժողովի որոշումը, յանձնարարելով անոնց գործադրութիւնը պատշաճ մարմիններուն, այն է՝

ա) Արևմտեան բիւրօյի միջոցով պահանջել, որ Վարդօն իւրացուցած 12,112 ֆր. գումարը վճարէ՝ յայտարարելէն 15 օրուայ ընթացքի մէջ.

բ) „Դրօշակ"-ի մէջ յայտարարել Վարդօի վերջնական արտաքսումը Դաշնակցութենէն՝ իբրև զեղծարար, յեղափոխութիւնը արատաւորող և անբարոյական անձնաւորութիւն։

„ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԶԻՆՒՈՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ"

„Միութեանական խումբ"

Քննիչ յանձնաժողովը, հիմնուած Ընդհ. Ժողովին ներկայացուած պաշտօնական զեկուցումներուն և նոյն ժողովի դիւանում եղած գրաւոր դոկումենտների վրայ, խնդիրը մանրամասն քննելուց յետոյ՝ եկաւ հետևեալ եզրակացութեան.

1) „Ժամանակաւոր զինուորական խորհուրդ" անուն կրող մարմինը Հ. Յ. Դաշնակցութեան մէջ կազմակերպուած է ապօրինի ճանապարհով։

2) Այդ ապօրինի մարմինը շինել և գործ է ածել կեղծ կնիք Հ. Յ. Դաշնակցութեան անունով։

3) Հրատարակել է Հ. Յ. Դաշնակցութեան անունից մի շարք թռուցիկներ և յատուկ ամբաստանագրեր, ջանալով ամենաստոր զրպարտութիւններով արատաւորել Դաշնակցութեան 1904-ի Ընդհ. Ժողովի կողմից ընտրուած մարմինները։

4) Տաճկահայ դատի պաշտպանութեան պատրուակով՝ երևան գալով և նրա անունը շահագործելով, բուրժուական և հակադաշնակցական այլ մութ տարրերի ձեռքը գործիք է եղել կազմակերպութեան դէմ և որոշ չափով վարկաբեկել է այդ դատը՝ հայ հասարակութեան առաջ։

5) Կազմակերպելով „Զինուորական Խորհուրդ", այդ խումբը նպատակ է ունեցել յայտարարել զինուորական դիկտատուրա և բռնի միջոցներով իր ձեռքն առնել կուսակցութեան վարչական գործը, դրամը, կայքը, Թիֆլիսի խմբագրութիւնը և այլն։

6) Իւրացրել է կազմակերպութեան մի քանի զէնքերը։

7 Գործիք է դարձել իշխանութեան ձեռքին և դառնում է գաղտնի ոստիկանութեան յատուկ հովանաւորութեան ներքոյ։

8) Ապօրինի այդ մարմնի գործունէութիւնը անպայման անհերկդիմի կերպով պարտաւոր է արժանացել Դաշնակցական բոլոր մարմինների և գործիչ ընկերների կողմից (Երկրի, Կովկասի և արտասահմանի)։

9) „Ժամանակաւոր զինուորական խորհուրդ" անուն տակ միացած ուժերի գործունէութիւնը ոչ միայն խուլիգանական շարժում է, ունենալով նեցուկ բուրժուական հակայեղափոխական մի խմբակ և ռուս ոստիկանութիւնը, այլ և մի ոտոր դաւաճանութիւն մանաւորապէս տաճկահայ դատին, որի անունն է շահագործում։

Այս բոլոր փաստերի հիման վրայ՝ ժողովը վերաքննելով խնդիրը, որոշեց.

1) Համարել Միհրանի և „զինուորական խորհրդի" միւս գործակից անդամների վարմունքը ծանր յանցանք կազմակերպութեան և նրա պաշտպանած տաճկահայ դատի դէմ, և այդ հիման վրայ ճանաչել նրանց իսպառ արտաքսած Դաշնակցութեան շարքերից։

2) Հրատարակել այդ որոշումը պաշտօնական օրգանի մէջ։

3) Հրաւիրել Դաշնակցական իրաւասու մարմինների ուշադրութիւնն այն հանգամանքի վրայ, որ ապագայում այդ տեսակ անձինք պէտք է անյապաղ ենթարկուեն „Կանոնագրքով" նախորոշուած պատասխանատուութեան, առանց սպասելու և բերելու այդ օրինակ խնդիրները Ընդհանուր Ժողովին։

ԶԵՂԾԱՐԱՐՆԵՐ

Լսելով Զրաբերդի շրջանի մասին ներկայացուած զեկուցումը և գտնելով որ այնտեղ տիրող տնտեսական տագնապը և զանազան հարստահարութիւնները արդիւնք են կառավարական ընդհանուր անարխիայի, գիւղացու սակաւահողութեան և աղքատութեան, ինչպէս և յեղափոխական նախկին մարտիկների կամ խմբերի մի մասի անբարոյական սանձարձակութեան, Ընդհանուր Ժողովը յայտարարում է.

1) Դաշնակցութիւնից հեռացուում են Ժողովրդի վրայ բռնացող զինուորները, և նրանց դէմ կռիւ է յայտարարում կազմակերպական միջոցներով։

2) Աւարառութիւնների, աւազակային խմբերի, ինչպէս և անարխիայի առաջն առնելու համար, պիտի կազմակերպել և իրար շաղկապել գիւղերը։

3) . . . . . .

ՆԱԽԱՀԱՇԻ

. . . . . .

ՀԱՇԻԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

. . . . . .

ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ „ԿԱՆՈՆԱԳԻՐԸ“

ԱՆԴԱՄՆԵՐ

1.— Իւրաքանչիւր ոք որ կ'ուզէ Հ. Ց. Դաշնակցութեան անդամակցիլ, պէտք է ամբողջովին ընդունի կուսակցութեան ծրագիրն ու տակտիքը, ենթարկուի Կանոնագրին և ամէն ջանք գործ դնէ կեանքին մէջ զանոնք իրականացնելու։

2.— Դաշնակցութեան անդամները կը բաժնուին երկու կարգի՝

ա) Գործօն անդամներ,

բ) Օժանդակ անդամներ։

Գործօն անդամներ են անոնք, որոնք կը մասնակցին Դաշնակցութեան ուէէ կազմին և կը վճարեն իրենց հասոյթին առնուազն 2 %-ը։

Օժանդակ անդամներ կը համարուին անոնք, որոնք ընդունելով կուսակցութեանս ծրագիրը և նիւթապէս օժանդակելով՝ չեն ղեկավարուիր սակայն անոր տակտիքով ու Կանոնագրով։

Ծանօթ.—Օժանդակ անդամները ընտրելու եւ ընտրուելու իրաւունք չունին։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

4.—Դաշնակցական կազմ կը համարուին՝

ա) Խումբ (առնուազն 7 անդամ)

բ) Ենթակոմիտէ (առնուազն 50 անդամ),

գ) Կոմիտէ (առնուազն 200 անդամ)

դ) Կեդրոնական կոմիտէ(առնուազն 1000անդամ)

ե) Պատասխանատու մարմին։

զ) Բիւրօ։

Դաշնակցական խումբերը կը բաժնուին քաղաքական, մարտական, արհեստակցական, գիւղացիական, կարմիր խաչի կամ այլ տեսակի։ Անոնց ամէն մէկուն համար կը մշակուի յատուկ ներքին կանոնագիր։

ՄԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ

147.—Կազմակերպութիւնը իր յեղափոխական ձեռնարկներու համար դաշնակցական շրջաններէն կը կազմէ մարտական խումբեր։

148.—Ամէն մէկ խումբ բաղկացած պիտի ըլլայ 10 մարտիկներէ։

149.—Իւրաքանչիւր մարտիկի պարտաւորութիւնն է ծանօթ ըլլալ Դաշնակցութեան ծրագրին ու պատրաստ՝ ծառայելու անոր իրականացման։

150.—Մարտիկ խումբերը կենթարկուին տեղական մարմնին ու Բիւրօներու կողմէն հրատարակուած հրահանգներուն։

151.—Իւրաքանչիւր մարտիկ պարտաւոր է ապրիլ սեփական աշխատանքով, ունենալ սեփական զէնք և ինքնուրոյն մտնել, իբրև կուռող, յեղափոխական ձեռնարկներու մէջ։

Ծանօթ.—Ակտիվ գործի մէջ եղած ատեն՝ մարտիկը իր ապրուստը կը ստանայ կազմակերպութենէն։

ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

152.—Միութիւնները կ'ըլլան՝

ա) արհեստակցական,

բ) գիւղացիական։

153.—Արհեստակցական միութիւններու նպատակն է՝ համախմբել գործարանական և արհեստաւորական աշխատաւորները ըստ զբաղմունքի և պաշտպանել անոնց շահերը։

154.—Գիւղացիական միութիւններու նպատակն է՝ գործակցական ձեռնարկներու միջոցով՝ պաշտպանել գիւղացիներու համայնական շահերը, ինչպէս նաև ազատել անոնց վաշխառուական, կալուածատիրական և այլ տեսակի հարստահարութիւններէ։

Ծանօթ.—Արհեստակցական եւ գիւղացիական միութիւններուն կից կամ անոնցմէ անկախ կրնան կազմակերպուիլ նաեւ կօպերատիվ միութիւններ։

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

125.—Կազմակերպութեան դրամական միջոցները կը մազմեն՝ ա) անդամավճարներ (հասոյթի 2—10 %), բ) նուէրներ, գ) հանգանակութիւն և դ) պատահական գումարներ։

126.—Իւրաքանչիւր դաշնակցական պարտաւոր է իր ամսական հասոյթի առնուազն 2% մացնել տեղական դաշնակցական մարմնի դրամարկղը ամիսը մէկ անգամ։

Ծանօթ.—Այն դաշնակցականը, որ երեք ամիս շարունակ չէ վճարած իր անդամավճարը, ձայնատուութեան եւ ընտրելու իրաւունքէն կը զրկուի մինչեւ հատուցանելը։

127.—Հանգանակութիւն ընելու իրաւունքը վերապահուած է միայն դաշնակցական մարմիններուն։

Ծանօթ.—Առանց մարմիններու գիտութեան եւ առանց պաշտօնական վկայագրի՝ հանգանակութիւն ընողները պիտի նկատուին իբրեւ զեղծարարներ։

128.—Բռնի միջոցներու գործածութիւնը հանգանակութեան գործի մէջ խստիւ արգիլուած է։

ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

158.—Դաշնակցական մամուլը պարտաւոր է ճշտութեամբ հետեւիլ կազմակերպութեան ծրագրին և տարածել այն գաղափարները, որոնք կը կազմեն ծրագրին հիմնակէտը։

159.—Դաշնակցութեան կեդրոնական պաշտօնական օրգանը—„Դրօշակը“ կը ղեկավարուի ընդհ. ժողովէն տրուած հրահանգներով։

160.—Բայօնական ժողովները իրաւունք ունին իրենց շրջաններուն մէջ—հիմնել բայօնական պաշտօնական օրգաններ, տալով անոնց յատուկ հրահանգներ և եթէ հարկ ըլլայ՝ նիւթական նպաստ, առանց դուրս գալու ընդհ. ժողովի որոշած նախահաշուէն։

161.—Կեդր. կոմիտէները կրնան հրատարակել դաշնակցական տեղական թերթեր, բայց առանց որեւէ պաշտօնական կամ կիսապաշտօնական բնոյթի։

162.—Դաշնակցութեան Խորհուրդը և Բայօնական ժողովները կրնան յայտարարել ոչ-դաշնակցական՝ կուսակցական այն թերթերը (առաջինը՝ ընդհանուր, իսկ երկրորդը՝ բայօնական թերթերու վերաբերմամբ), որոնք կը շեղուին կուսակցութեան ծրագրէն և անոր հիմնական տեսակէտներէն։

Ծանօթ.—Թռուցիկ թերթերու եւ գրաւոր պրոպագանդի այլ ձեւերու վերաբերութեամբ Բիւրօները կուտան յատուկ հրահանգներ։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

		ֆր. ս.
1.	Ապատամբական ոգի (սպառուած)	.10
2.	Յեղափոխական կեանքից (սպառ.)	.05
3.	Դաղտնի տպարան (սպառ.)	.05
4.	Դիտական սոցիալիզմ. Ֆ. ԷՆԳԵԼՍ (սպառ.)	.40
5.	Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր. (Ի. տպագր.)	—
6.	Կուկունեան խմբի արտաւանքը. (սպառ.)	.20
7.	Կարնոյ յիշատակին (Զորս հատուած) „	.50
8.	Հ. Յ. Դ. երկրորդ ընդհ. ժողովի տեղեկագրութիւնը	—
9.	Գրքիչներ, Homo homini lupus, ՎԱՐԴԳԷՍ (սպառ.)	.20
10.	Երիտասարդներին. Պ. ԿՐԱՊՕՏԿԻՆ. (սպառ.)	.20
11.	Ազատութեան նահատակներին. ՂԱՐԻԲ. Ա. (սպառ.)	.30
12.	„ „ „ Բ. „	.60
13.	Ամբոխային տրամաբանութիւն. ԷԼԼԷՆԻ. (սպառ.)	.50
14.	Ազատութեան նահատակներին. ՂԱՐԻԲ. Գ. „	.30
15.	Հայաստան եւ Մակեդոնիա	.50
16.	Կովկասեան վէրքեր. Է. ԱԿՆՈՒՆԻ. (սպառուած)	3.—
17.	Հայրենիքի զաղափարը. Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ (սպառ.)	1.—
18.	Կազմակերպական կանոնագիր. (Բ. տպագր.)	—
19.	Դէպի կռիւ. Է. ԱԿՆՈՒՆԻ. (սպառուած)	2.—
20.	Յեղափոխականներ. Ս. ՆԻՐՎԱՆԵԱՆ (սպառ.)	.20
21.	Նախագիծ Կովկասեան գործունէութեան. (Բ. տպ.)	—
22.	Подвиги царизма. В. Араратскій.	.50
23.	**Les tueries de Bakou,** A. ARAZI	.20
24.	Յեղափոխական դաշն.	.20
25.	Հ. Յ. Դ. երրորդ ընդհ. ժողովի տեղեկագրութիւնը.	—
26.	Կոչ Մահմէտականներին (թուրքերէն)	.10
27.	**Les Plaies du Caucase,** E. AKNOUNI	2.—
28.	Ազատութեան նահատակներին. ՂԱՐԻԲ. Դ. գրոյկ.	.40
29.	Մեծ մարդասպանի դէմ (Դատավարութիւն)	.50
30.	Վիտօշի բազէն. ՎՏԱՐԱՆԴԻ.	.50
31.	Յեղափոխականի մտքերը. ՔՐ. ՄԼԲԱՅԼԵԱՆ	1.—
32.	Հայորդիները. ՍԻԱՄԱՆԹՕ.	.50
33.	Սասուն-Մուշի կռիւները	.50
34.	Հայկական տանջանքները եւ Եւրոպան. ԲԵԼՈՆՇՏԱՅՆ	.50
35.	Մարտական հրահանգներ. ԱՆԴՐԱՆԻԿ.	1.—
36.	Միացէ՛ք, կոչ Թիւրքիայի բոլոր ազգերին (թուրքերէն)	.10
37.	Թիւրքական բանտերը. ՄԱՐ.	.25
38.	Բաղամեանի կուսակցութիւնները Ռուսաստանում	.50
39.	Հայաստանը եւ Եւրոպան. Գ. ԲՐԱՆԴԷՍ.	.20
40.	Աղբիւր-Սերոբ (Կենսագրական). Ս. Մ.	.25
41.	Եւրոպացիներու կարծիքը	.30
42.	Կանոնագիր Հ. Յ. Դաշնակցութեան	—

ՄԵԾԱԴԻՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԸ — ալբոմի — հատը 1 ֆր.

ԿՕԶԱԿԱՅԻՆ ՍԱՐՍԱՓՆԵՐ (ֆրանս. ծանօթութեամբ) — 50 ս.

Սերոբի, Սերոբի և որդոց, Հրայրի, Վահանի, Թորգոմի, Խանի, Քրիստափորի, Կայծակի, Պետրոսի, Կարօի, Բաբկէնի:

Հատը 50 սանտիմ, իսկ սէրին (13 հատը) 5 ֆր.

Դիմել՝ «Դրօշակի» խմբագրութեան, Ժընեվ:

„ՅԱՌԱՋԻ“ ԳՐԱԴԱՐԱՆ

		Ր. կ.
1)	ՀԱՐՈՒՍՏՆԵՐ ԵՒ ԱՂՔԱՏՆԵՐ, *Բախ,*	— 15
2)	ՀԱՑ, ԼՈՑՍ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ, *Պէշէխոնով.*	— 12
3)	ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՓՈՂԵՐԸ, Ս. *Ֆէօդորովի*	— 5
4)	ՆՈՐ ԼԵՐԱՆ ՔԱՐՈԶԸ, *Կարմելիւկ*	— 2
5)	ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ԲԱՆՒՈՐԸ, *Շերնով.*	— 15
6)	ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ, *Պերնեստորֆեր.*	— 5
7)	ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻՆ, *Պրամպոլինի*	— 5
8)	ԱՐՀԵՍՏԱԿ. ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ, Ե. *Թոփչեան*	— 15
9)	ԻՆՉ Է ԻՐԱՒԱԿ. ՊԵՏՈՒԹԻՒՆԸ, *Նովոտորժսկի.*	— 15
10)	ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԸ ՆՈՐ-ԶԵԼԱՆԴԻԱՅՈՒՄ, *Կաբանով*	— 3
11)	ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՐԱ ԱՊԱԳԱՅ ԳՐԱՒՈՒՄԸ, *Ժան Ժորէս*	— 5
12)	ԴԵՄՈԿՐԱՏԻԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ, Ա. *Աբեղեանի.*	— 12
13)	ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ, *Կարլ Կաուցկի.*	— 3
14)	ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ, Ա. *Ահարոնեանի* (Ղարիբ)	— 80
15)	ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ, Ֆ. *Լասալ*	— 5
16)	ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԼՈՒԾԵԼ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԸ, Ա. Ն.	— 12
17)	ԻՆՉ Է ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ, Վ. *Գոլուբեվ*	— 2
18)	ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿ. ԳԻՒՂԱՑԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ, Ս. *Զաւարեանի.*	— 25
19)	ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐԷՆՍԳՐՈՒԹԻՒՆԸ ԴԱՇՆԱԿ. ԶԻՒՑԵՐԻԱՅՈՒՄ, Ալֆոնս *Դիւնան*	— 20
20)	ՈՎ ԻՆՉՈՎ Է ԱՊՐՈՒՄ, *Դիկշտեյն*	— 7
21)	ՄԻ ԶՐՈՅՑ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ Ն. Լ.	— 5
22)	ԱԳՐԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՐՑԸ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄԻ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ Լ. *Շիշկո*	— 7
23)	ԿՕՕՊԵՐԱՅԻԱ, Ա. *Նիկոլաեվ.*	— 15
24)	ՇՏԱՊԵՅԷՔ ՕԳՏԻԵԼ ՁԵՐ ԻՐԱՒՈՒՆՔԻՑ	— —
25)	„ԵՐԿՈՒ ԾՐԱԳԻՐ“, Լ. *Պետրով*	— 20
26)	ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԱՐԵՒՄՈՒՏՔՈՒՄ, Ս. *Վշչոսկի*	— 12
27)	ԳԻՒՂԱՑ. ՀԱՐՑԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ, Ս. *Ան.-սկի*	— 7
28)	„ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ“, *Մէք. Յովհաննիսեան.*	— 50
29)	„ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՒ ՍՕՑԻԱԼԻԶՄԸ“, Ժ. Գէդ. և Պ. *Լաֆարգ*	— 5
30)	„ԳՕՐԾԵԱՆ ՀԱՆԳՈՅՑԸ“ — (*Թիւրքահայոց հարցի վերջին շրջանը*), Մ. *Յովհաննիսեան.*	— 20
31)	ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՌԻՒ ԹԷՕՐԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ, *Շերնով.*	— 10
32)	ԻՆՊԻՍԻ ԿԱՐԳԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՒՈՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ, *Նեկրասով*	— 10
33)	ՎԵՆԱՍԱԿԱՐԸ, *Արամայիս*	— 4